ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 1950-1960 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ»


Առարկա՝ Պատմություն
Ուսուցչուհի՝ Լուսինե Պետրոսյան
Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան


Գյումրի-2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1950-1960ԹԹ: 1961-Ի ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ……6

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱԳԱՅԻՆ - ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 1950-1960 ԹԹ
2.1 Կիպրոսի խնդիրը և 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի ջարդարարությունները Թուրքիայում և դրա հետևանքները……10
2.2 Թուրքիայում ազգային փոքրամասնությունների սահմանադրական պահանջները, տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականության բաղադրիչ……..……..17
2.3 Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը երկրի քաղաքական կյանքում 1950-1960 թթ……22

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՐ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
3.1 Իսլամի դերի բարձրացումը և քաղաքանացումը……...32
3.2 Ներքաղաքական իրավիճակը և քաղաքական ճգնաժամը 1950-ական թթ……38
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……44
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..…..46

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը**: Թուրքիայի քաղաքականությունը ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ 1950-1960-ական թթ. ուսումնասիրությունը կարևոր է հասկանալու, համեմատելու և գնահատելու, արժևորելու այն առանձնահատկությունները, որոնք ունի ներկայիս Թուրքիայի Հանրապետությունը ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Թուրքիան մինչև այսօր էլ շարունակում է հետամուտ լինել պանթուրքիզմի քաղաքականությանը, ձգտելով ստեղծել Մեծ Թուրան և վերացնել այդ ճանապարհին հայտնված բոլոր խոչընդոտները, որոնց շարքում գտնվում էր նաև Հայաստանը: Թուրքիան մինչև հիմա էլ նույն քաղաքականությունն է վարում և չի հրաժարվել պանթուրքիզմից:

**Աշխատանքի նպատակը:** ՈՒսումնասիրել 1950-1960-ական թթ. Թուրքիայում իշխող կուսակցությունների գործունեությունը, ներքաղաքական վիճակը, Թուրքիայի քաղաքականությունը ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, ինչպես նաև պետական դրդապատճառները տեղանունների թուրքացման, ազգային փոքրամասնությունների ներկայությունը քաղաքական կյանքում, ինչպես նաև իսլամի դերի բարձրացումը և իսլամադավան հայերի պատմությունը:

**Աշխատանքի խնդիրները** Աշխատանքի խնդիրներ են՝

1. Ներկայացնել Թուրքիայի Հանրապետության ներքին և արտաքին դրությունը 1950-1960-ական թթ:
2. Անդրադառնալ Կիպրոսի հիմնախնդրին և 1955թ սեպտեմբերի 6-7-ի ջարդարարություններին:
3. Ներկայացնել Թուրքիայում ազգային փոքրամասնությունների սահմանադրական պահանջները և դրանից բխող խնդիրները:
4. Արժևորել Թուրքիայի կրոնական-պետական գաղափարախոսությունը:
5. Վերհանել Ազգային-կրոնական փոքրամասնությունների իրավունքները Թուրքիայի կազմում:
6. Քննել տեղանունների փոփոխությունը, որ հանգեցնում էր թուրքացման քաղաքակնության շարունակմանը: Տեղանունները ցույց են տալիս պատմական անցյալը,

այտեղ բնակված ժողովրդի պատմության, մտածելակերպի մի շարք մանրամասներ:

7. Ներկայացնել Թուրքիայի Հանրապետությունում բռնի իսլամացման քաղաքականությունը՝ հայերի նկատմամբ և վերհանել դրա գլխավոր նպատակը:
8. Անդրադառնալ Թուրքիայի Հանրապետության ներքաղաքական իրավիճակին և 1950 ական թթ վրա հասնել ճգնաժամին և դրանից բխող իրադարձություններին:

**Աշխատանքի ժամանակագրական սահմանները:** Ավարտական աշխատանքը ժամանակագրական առումով ընգրկում է 1950-1960-ական թթ. ընկած ժամանակահատվածը:

**Աշխատանքի մեթոդաբանական հիմքը:** ՈՒսումնասիրությունը կատարել ենք պատմահամեմատական և համադրման մեթոդների հիման վրա:

**Օգտագործված աղբյուրների և գրականության տեսություն**: Թեմայի ուսումնասիրությունը կատարվել է սկզբնաղբյուրների քննության և գիտական հետազոտությունների ոսումնասիրման հիման վրա:

Շատ արժեքավոր է Թուրքիայի Հանրապետության պատմության բուհական դասագիրքը, որը կարևոր գիտական, կրթական ու քաղաքական նշանակություն ունի: Սաֆրաստյանի հեղինակային հոդվածների օգնությամբ հնարավոր եղավ բացահայտել 1950-1960-ական թթ. Թուրքիայի գործող կառավարության, նրանց արտաքին և ներքին քաղաքականության, ինչպես նաև ազգային-փոքրամասնությունների նկատմամբ, վերջիններիս վարած քաղաքականությունը բացահայտելու համար: Դասագիրքը հնարավորություն է տալիս հնացած խորհրդային դասագրքերից, ինչու ոչ նաև հաճախ մեր ազգային խնդիրներին հակասող ռուսալեզու դասագրքերից բացի ուսումնասիրել նաև մեր հայտնի թուրքագետներ Ռ.Մելքոնյանի և նրա ուսուցչի Ռ. Սաֆրաստյանի[1] խմբագրված դասագրքով ուսումնասիրել Թուրքիայի Հանրապետությունը, այս դեպքում բացահայտվում է Կիպրոսի հիմնախնդիրները և սեպտեմբերի 6-7 ին տեղի ունեցած ջարդարարությունները, որոնք ծանր հետևանքներ ունեցավ ազգային-կրոնական փոքրամասնությունների համար: Արժեքավոր է նաև՝ Թուրքիայի պատմության ուրվագծեր գիրքը[2], որը հնարավորություն է տալիս բացահայտելու

[1] Սաֆրաստյան Ռ.., Թուրքիայի Հանրապետության պատմություն., Երևան, 2014, 396 էջ:
[2] Գեղամյան Ս.Վ, Թուրքիայի ազգային բուրժազիան երկրի տնտեսական և սոցիալ- քաղաքական կյանքում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, Հ 12, 1985, 229-238 էջ:

1950-1960-ական թթ. Թուրքիայի Հանրապետության առկա կուսակցությունների, գործիչների և նրանց քաղաքական կողմնորոշման մասին, ինչպես նաև նախընտրական խոստումների մասին, որը հատկապես գրավիչ էին մանր ու միջին գործարարների և սեփականատերերի համար, այստեղ նշվում էր ԺԿ-ի կարգախոսներից մեկը « ամեն թաղամասում մեկ միլիոնատեր»: Մանրամասն ներկայացվում է Ադնան Մեդերեսի կառավարման մասին: Ներկացված է 1956թ հունիսի սկզբին ԹԱՄԺ-ի ընդունած «օրենք մամուլի մասին», որի համաձայն թերթիկներին ու հանդեսներին արգելվում էր տպագրել իշխանությունների համար անցանկալի հոդվածներ երկրի տնտեսության մասին, այն խախտելու դեպքում դատապարտվում էին 3-5 տարի ժամկետով: Արժեքավոր է նաև Երմենևի վկայությունը երկրորդ աշխարհամարտից հետո Թուրքիայի զարգացման նախադրյալների մասին, գրքը օգնեց բացահայտել, որ Իսմեթ Ինենյուի կառավարման տարիներին ազգային փոքրամասնությունները ավելի ծանր վիճակում էին, քան Ջելալ Բայարի կառավարման ընթացքում:

Արժեքավոր է նաև Մելքոնյանի[3] աշխատությունը, որտեղ բացահայտվում է 1955թ. սեպտեմբերի 6-7-ին տեղի ունեցած ջարդարարությունների մանրամասները, որոնք իրականացրել էին հայեր, հույների նկատմամբ: Թուրքիայի Հանրապետությունում գոյություն ունեցող ազգային-կրոնական փոքրամասնությունների թվաքանակը մեզ հնարավորություն է տալիս բացահայտել Երմենևի[4] աշխատությունը, որտեղ մենք տեսնում ենք Թուրքիայի բնակչության ազգային կազմը ըստ մայրենի լեզվի հատկանիշի՝ թուրքական մարդահամարների տվյալների համաձայն: Արժեքավոր է նաև Ս.Վ Գեղամյանի հոդվածը, Ռ.Մելքոնյանի աշխատությունը և այլն:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

---

[3] Մելքոնյան Ռ., երիտթուրքեր-քեմալականներ գաղափարական և կադրային շարունակություն, Արևելագիտության հարցեր, Երևան, թիվ 14, 2018, 152-165 էջ, (http://ysu.am/files/6-1574142210-.pdf):

[4] Երմեն, Թուրքերի ծագումը, Երևան, 1957, 370 էջ:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1950-1960ԹԹ: 1961-Ի ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Գալով իշխանության՝ նախագահ Ջելալ Բայարը հայտարարեց, որ երկրի արտաքին քաղաքականությունում փոփոխություններ չեն լինելու, այսինքն՝ շարունակելու են անցած տարիների արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Հոլանդացի հայտնի թուրքագետ Էրիկ Ցյուրխերը Թուրքիայում երիտթուրքական կառավարման շրջանը հասցնում է մինչև 1950-ը, այն հիմքով, որ մինչ այդ իշխած քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցությունը երիտթուրքերի դե ֆակտո շարունակողն էր ու քեմալական ազգայնամոլական շարժման, գրեթե առանց բացառության, բոլոր առանցքային գործիչները նախկին երիտթուրքեր էին: Կան նաև գիտնականներ, որ երիտթուրքական իշխանության փաստացի գոյությունը Թուրքիայում իրավացիորեն հասցնում են մինչև 1960 թ. և 1950-1960 թթ. իշխած Ժողովրդավարական կուսակցությանը ևս համարում բացահայտ երիտթուրքական մտածելակերպի շարունակող[5]: Ըստ թուրքագետ Սուրեն Բաղդասարյանի օբյեկտիվ դիտարկման և մեկտեղած փաստերի, մինչև 1960 թ. Թուրքիայի 3 նախագահ, 5 վարչապետ, խորհրդարանի նախագահներ, բազմաթիվ նախարարներ եղել են երիտթուրքական կուսակցության նախկին անդամներ, իսկ հանրապետության վերնախավին նա անվանում է երիտթուրքական կուսակցության «զինվորական վերնախավի երկրորդ էշելոնի ներկայացուցիչներ»: Թուրք պատմաբան Էմրե Քոնգարը անդրադառնալով Ժողովրդավարական կուսակցության կառավարման տարիներին և կոնկրետ նախագահ Ջելալ Բայարին՝ նշում է. «Անգամ 1950-ականներին կարելի էր նկատել «իթթիհաթական» արատավոր սովորույթները: Այդ տարիներին իշխանության ղեկին գտնվող Ժողովրդավարական կուսակցությունից նախագահ Ջելալ Բայարը, լինելով հին իթթիհաթական, ապահովում էր «Մենդերեսի շրջանի» և «երիտթուրքական» շրջանի օրգանիկ կապը»[6]: Ի դեպ, Սայիթ Չեթինօղլուն մեջբերում է հենց Ջելալ Բայարի խոսքը, որը գալիս է ապացուցելու վերը նշվածը. «Ես մինչև կյանքիս վերջ ապրել

[5] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 157-158:
[6] Նույն տեղում:

եմ որպես երիտթուրք»:[7] ԺԿ ժամանակահատվածում մեծացավ Թուրքիայի արտաքին քաղաքականության կախվածությունը այլ նահանգներից, առաջին հերթին Միացյալ Նահանգներից[8]: 1952-ի փետրվարի 18-ին Թուրքիայի Մեջլիսը հաստատեց կառավարության որոշումը Թուրքիայի՝ ՆԱՏՕ մտնելու վերաբերյալ: Դրանից հետո Թուրքիայի կառավարիչները ակտիվորեն ձեռնամուխ եղան Բաղդադի ագրեսիվ դաշնագրի կազմակերպմանը: 1959-ի մարտին ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև ռազմական պայմանագիր կնքվեց, իսկ նույն տարվա հոկտեմբերին ՝Թուրքիայում ՆԱՏՕ-ի հրթիռային կայանների տեղակայման մասին համաձայնագիր[9]: Խորհրդային Միության, Բուլղարիայի և արաբական երկրների սահմանների մոտ ռազմաբազաների կառուցումը սպառնալիք էր ոչ միայն այդ երկրների, այլև հենց Թուրքիայի անվտանգության համար: Թուրքիայում օդային ու ծովային հենակետերի և ռազմավարական նշանակության մայրուղիների կառուցմանը զուգահեռ, թուրքական բանակը վերազինվում էր ամերիկյան ռազմական տեխնիկայով: 1959-ին Թուրքիայի կառավարությունը Եվրոպայի հարավարևելյան գոտում գտնվող ՆԱՏՕ-ի ցամաքային զորքերի շտաբներին հանձնեց 12 դիվիզիա, որոնց թիվը մոտ 200 հազար զինվոր էր: Թուրքական բանակի սպաների ուսուցումն ու վերապատրաստումն իրականացվել են ամերիկացի ռազմական մասնագետների ղեկավարությամբ: 1959-ի Փարիզի համաձայնագրով Թուրքիան պարտավորվեց 12 տարվա ընթացքում իր պարտատերերին վճարել իր պարտատերերին և 440 միլիոն ԱՄՆ դոլարի պարտքի մուրհակը՝ չհաշված տոկոսները: Թուրք տնտեսագետների կարծիքով, պարտքը ծածկելու համար Թուրքիային 120 տարի կպահանջվեր: 1950-1960 թթ. ընթացքում բանվորների գործադուլներ էին տեղի ունենում Անկարայում, Ստամբուլում, Իզմիրում, Մերսինում, Իսկենդերոնում և այլ քաղաքներում: Գործադուլավորները պահանջում էին կյանքի բարելավման պայմաններ, սոցիալական ապահովագրության ներդրում, հարկերի կրճատում, տուգանքների վերացում, աշխատանքային նոր օրենք և կառավարությունից անկախ արհմիությունների ստեղծում: Չնայած բռնաճնշումներին ՝ աշխատողները պահանջում էին դուրս բերել թուր-

---

[7] Մելքոնյան Ռ.., երիտթուրքեր-քեմալականներ գաղափարական և կադրային շարունակություն, Արևելագիտության հարցեր, 2018, թիվ 14, էջ 154, (Ebook http://ysu.am/files/6-1574142210-.pdf ):

[8] Ахметов Тимур, Турция в 1950-е гг.: внутренняя и внешняя политика правительства А.Мендереса. Переворот 1961 г. и принятие новой конституции , Москва, 2015, с 7 ,- https://studopedia.net/.

[9] Մարտիրոսյան Հ.Մ., , Թուրքական կառավարող շրջանների քաղաքականությունը օտարերկրյա կապիտալի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ Հ. 5, 1970, էջ 146-149,-( https://cccsysu.com/wp-content/uploads/2015/05/Arm-Turk-adaptacia.pdf (ebook) :

քական զորքերը Կորեայից: Թռուցիկներ բաժանվեցին շատ քաղաքներում՝ կոչ անելով կազմակերպել համապետական ճակատ՝ ընդդեմ Թուրքիայի՝ Հյուսիսատլանտյան դաշինք մտնելու: Իզմիրում տեղի ունեցավ հազարավոր բանվորների ցույց, որոնք պահանջում էին ամերիկացիներին վտարել երկրից: Բանվորական շարժման ազդեցության տակ Թուրքիայի կառավարությունը հարկադրված էր օրենքներ ընդունել նվազագույն աշխատավարձ սահմանելու, տարեկան վճարովի արձակուրդների մասին, ինչպես նաև որոշում կայացնել աշխատանքային օրենսդրությունը խախտող ձեռնարկատերերի հետապնդման մասին: 1950-1953 թվականներին գյուղացիական ընդվզումների ալիքը տարածվեց երկրի շատ շրջաններում[10]: Գյուղացիական ապստամբությունները, որոնք ունեին ինքնաբուխ բնույթ, դաժանորեն ճնշվեցին իշխանությունների կողմից: Ըստ թուրքական թերթերի՝ 1951 - 1953 թվականներին տասնյակ հազարավոր գյուղացիներ տանջվել էին Թուրքիայի բանտերում: Կառավարության գործողություններից դժգոհության ամենաչնչին դրսևորումը ընկալվում էր որպես «կոմունիստական քարոզչության» արդյունք: Իշխանությունները բանտարկեցին ընկերության 22 առաջնորդներին՝ նրանց մեղադրելով «կոմունիզմ տարածելու մեջ» և փակեցին ընկերության «Բարիշ» թերթը[11]: Մեջլիսն ընդունեց օրենք, որը համալսարանի դասախոսներին և ուսուցիչներին արգելում է զբաղվել քաղաքական գործունեությամբ, մամուլում քաղաքական թեմաներով հոդվածներ խոսել և տպագրել: Հետապնդվում էին ազգային փոքրամասնությունները: ԺԿ- ն կրոնական արշավ է սկսել անհավատների դեմ: 1955 թ. սեպտեմբերի 1-7-ը Մենդերեսի կառավարությունը ջարդեր կազմակերպեց Ստամբուլում և Իզմիրում, որի արդյունքում հույներին, հայերին և հրեաներին պատկանող շատ տներ, խանութներ, արհեստանոցներ, դպրոցներ կողոպտվեցին և ավերվեցին: Աճող դժգոհության պայմաններում, փորձելով կանխել իր ռեժիմի փլուզումը, ԺԿ-ն գնաց զանգվածային ռեպրեսիաների ուղի: Ձերբակալություններ են իրականացվել բնակչության բոլոր խավերի շրջանում: Միջկուսակցական պայքարում ուսանողները միացան ընդդիմությանը և դեմ արտահայտվեցին Դեմոկրատական կուսակցության կառավարման բռնակալ մեթոդներին: 1960 թ.-ի ապրիլի 27-ին Ստամբուլի համալսարանի ուսանողները ցույց անցկացրեցին և

[10] Սաֆրաստյան Ռ, նշվ. աշխ., էջ 158:
[11] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 159:

բողոքեցին զանգվածային բռնաճնշումների դեմ[12]: Հաջորդ օրը տեղի ունեցավ բազմահազարանոց ցույց՝ բոլոր ֆակուլտետների ուսանողների մասնակցությամբ: Ոստիկանությունը արցունքաբեր գազ է արձակել ու կրակ բացել ցուցարարների ուղղությամբ: Բախման արդյունքում կան զոհեր ու վիրավորներ: Ստամբուլում խաղաղ ցույցի կրակոցը լայն վրդովմունք առաջացրեց: Բազմաթիվ հեռագրեր ստացվեցին ամբողջ երկրից՝ ուսանողների կոտորածի համար պատասխանատու անձանց պատասխանատվության ենթարկելու պահանջով: Անկարայի համալսարանի ուսանողները, ի համերաշխություն Ստամբուլի համալսարանի ուսանողների, ապրիլի 29-ին հանրահավաք անցկացրին Աթաթյուրքի հուշարձանի մոտակայքում գտնվող Քըզըլայ հրապարակում: Ուսանողների ցույցեր տեղի ունեցան նաև այլ քաղաքներում: Մենդերեսի կառավարությունը ռազմական դրություն հայտարարեց Ստամբուլում և Անկարայում, արգելեց հանդիպումները, ցույցերը, ինչպես նաև մամուլում իրադարձությունների վերաբերյալ ցանկացած հաղորդագրության հրապարակումը: 1960-ի մայիսի 21-ին Անկարայի ռազմական դպրոցի կուրսանտները ցույց են կազմակերպել՝ ի նշան համերաշխության ուսանողների հետ[13]: Բանակում սկսված մաքրումը արագացրեց իրադարձությունները: Մայիսի 27-ի լուսադեմին, Գաղտնի կոմիտեի հրամանով, Անկարայի և Ստամբուլի կայազորները գրավվեցին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հանրապետական ժողովրդական կուսակցության շարքերում պառակտում տեղի ունեցավ[14]: 1960-ականներին Թուրքիայի տնտեսությունում սկսվեց ճգնաժամ առաջանալ: Այս ամենը հանգեցրեց 1960-ի մայիսին հեղաշրջման: Հեղաշրջման հետևանքներից մեկը 1924-ի Սահմանադրության վերացումն էր: Դա տեղի է ունեցել 1960-ի հունիսի 12-ին: Գրեթե մեկ տարի անց հանրաքվեով ընդունվեց 1961 թ. Նոր Սահմանադրությունը, որի համաձայն՝ Թուրքիան հռչակվեց ազգային, ժողովրդավարական, աշխարհիկ և սոցիալ-իրավական պետություն, որում գերագույն իշխանությունը պատկանում է թուրք ժողովրդին: Սահմանադրության հատուկ տեղերից մեկը գրավում էին աշխարհիկ սկզբունքները հռչակող դրույթները. Կրթության իրավունք, հավատացյալ աղոթք, իրենց կրոնական զգացմունքները հայտարարելու կամ չհայտարարելու ազատության իրավունք:

[12] Նույն տեղում, էջ 159:
[13] Ахметов Тимур նշվ. հոդվ., էջ 7-8,- https://studopedia.net/.
[14]Ахметов Тиму, նշվ. հոդվ., էջ 9.

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
# ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 1950-1960 ԹԹ:

## 2.1 Կիպրոսի խնդիրը և 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի ջարդարարությունները Թուրքիայում և դրա հետևանքները:

1950-ականներին Կիպրոս կղզու 600 000 բնակչության 82 տոկոսը կազմում էին հույները, իսկ 18 տոկոսը՝ թուրքերը:[15] Հույների շրջանում սկսված Հունաստանի հետ վերամիավորվելու շարժումը հանդիպեց Թուրքիայի և կիպրոսցի թուրքերի դիմադրությանը, որն էլ վերածվեց լուրջ կոնֆլիկտի և թուրք-հունական բախման՝ նաև ժողովրդագրական հետևանքներով: Այդ ժամանակաշրջանում Կիպրոսի խնդրի շուրջ միջազգային հարթակներում տեղի ունեցան շահագրգիռ ու միջնորդ պետությունների տարբեր պաշտոնյաների մի քանի հանդիպումներ՝ հաշտության եզրեր գտնելու նպատակով: 1955 թ. օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 7-ը Լոնդոնում Կիպրոսի խնդրի հետ կապված՝ հրավիրվեց անգլո-հունա-թուրքական կոնֆերանս՝ արտաքին գործերի նախարարների մակարդակով: Հենց այդ օրերին էլ հունական կողմի վրա ճնշումներ գործադրելու և զիջումներ պարտադրելու նպատակով Թուրքիայում իշխանությունների հրահանգով և քաջալերմամբ ուժեղացան հակահունական տրամադրություններն ու հալածանքները հունական համայնքի հանդեպ, որոնց գագաթնակետն էլ դարձան 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում, Իզմիրում հունական և հայկական համայնքների վրա թուրքական իշխանությունների կազմակերպած հրոսակախմբերի հարձակումները՝ «պոգրոմները» (թուրքերեն՝ 6-7 Eylül Olayları, հունարեն՝ «Septemvriana»), որոնք ուղեկցվել են քրիստոնյաների դաժան ծեծով և սպանություններով: Սեպտեմբերի 6-ին, ժամը 13:00-ին Թուրքիայի պետական ռադիոյով հայտարարվել է, որ Սալոնիկում գտնվող Աթաթյուրքի հայրական տան վրա ռումբ է նետվել[16]: Այս լուրը կեսօրից հետո հրապարակում է «Իսթանբուլ Էքսպրես» թերթը, որը հատուկ դրա համար նույն օրը երկրորդ անգամ է տպագրվում: Նույն օրը կեսօրից հետո տարբեր երիտասարդական կազմակերպություններ իշխանությունների աջակցությամբ ստեղծված «Կիպրոսը թուրքական է» միությունը Ստամբուլի

[15] Еремеев Д., Турция в годы Второй мировой и “холодной” войн (1939-1990), Москва, 2005, с. 87:
[16] Սաֆրաստյան Ռ.., նշվ. աշխ., էջ 164:

Թաքսիմ հրապարակում կազմակերպում են բողոքի հանրահավաք՝ կապված այդ դեպքի հետ:[17] Դրանից հերո միտինգավորները սկսում են քարեր նետել Թաքսիմին մոտ Իսթիքլյար պողոտայում գտնվող, հույներին և հայերին պատկանող խանութների վրա, իսկ կարճ ժամանակ անց հայտնվում են նախօրոք մահակներով և այլ անհրաժեշտ գործիքներով զինված խմբեր, որրոնք հարձակվում են, կոտրում ու թալանում ոչ մուսուլմաններին պատկանող խանութները, արհեստանոցները, տները, դպրոցները, եկեղեցիները և անգամ գերեզմանատները: Ջարդարարների շարքերում եղել են նաև կանայք ու աղջիկներ, որոնք ակտիվորեն մասնակցել են ոչ մուսուլմանների խանութների, տների, արհեստանոցների թալանին: Ջարդերը չեն սահմանափակվել միայն Իսթիքլյալ պողոտայով, այլ արագ տարածվել են Ստամբուլի մյուս թաղամասեր՝ Բաքըրքյոյ, Բեյօղլու, Բեյքոզ, Բեշիքթաշ, Էմինոնյու, Էյուփ, Ֆաթիհ, Քադըքյոյ, Սարըյեր, Շիշլի, ՈԻսքյուդար, անգամ Ստամբուլի մոտակայքում գտնվող Մարմարա ծովի Իշխանաց կղզիներ, որտեղ բնակվում էին հույներ. հիմնականում այստեղ էին գտնվում նրանց ամառանոցները[18]: 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերի ընթացքում հարձակման են ենթարկվել ոչ մուսուլմանների 4214 խանութ, 1004 տուն, 73 եկեղեցի, 1 սինագոգ, 2 վանք, 26 դպրոց, ինչպես նաև գործարան, հյուրանոց, բար, գերեզմանատուն, դեղատուն, լաբորատորիա, տպարան. ընդհանուր առմամբ 5622 օբյեկտ: Դեպքերի ժամանակ հարձակման ենթարկված աշխատավայրերի 59 տոկոսը պատկանել է հույներին, 17 տոկոսը՝ հայերին, 12 տոկոսը՝ հրեաներին: Իսկ հարձակման ենթարկված տների 80 տոկոսը պատկանել է հույներին, 9 տոկոսը՝ հայերին, 3 տոկոսը՝ հրեաներին[19]: Հայոց ցեղասպանությունից 40 տարի անց՝ 1955-ին, հանրապետական Թուրքիայում կրկին տեղի ունեցավ ցեղասպանական գործողություն՝ պոգրոմ, և թիրախները կրկին քրիստոնյաներն էին, հիմնականում հույները և հայերը: Թուրքական պետության համար հիմնավորումը արտաքին ճակատում հույների հակաթուրքական գործունեությունն էր, որը փաստացի դարձավ քաղաքական վերնախավի և ազգայնամոլական հասարակական շրջանակների համագործակցության կարևոր ու միավորող գործոն ընդդեմ ներքին թշնամու՝ Թուրքիայի քաղաքացի քրիստոնյաների: Բազմաթիվ են ապացույցները, որ այս ամենը նախօրոք մանրակրկիտ

[17] Սաֆրաստյան Ռ., նույն տեղում:
[18] Սաֆրաստյան Ռ., Նույն տեղում:
[19] Մելքոնյան Ռ.., Թուրքիայի քաղաքականությունը քրիստոնյա փոքրամասնությունների(հայեր, հույներ) նկատմամբ 1920-1960-ական թթ, Երևան, 2019, էջ 29:

ծրագրված և կազմակերպված է եղել պետության կողմից: Մինչև Աթաթյուրքի տան ռմբահարման մասին ռադիոյով հայտարարելը և թերթում տպագրվելը՝ Ստամբուլի տարբեր վայրերում հավաքվել էին մարդկանց հոծ խմբեր, որոնք լուրի տարածումից րոպեներ անց սկսել են իրենց գործողությունները[20]: Ձևավորվել էին 20-30 հոգանոց ջարդարարների խմբեր, որոնցում կար հստակ դերաբաժանում. կային խմբերի ղեկավարներ, հրահրողներ, փոքրամասնությունների տների և խանութների տեղերը ցույց տվողներ, ջարդարարներ, ուղղորդողներ,թալանողներ և այլն: Ավերվածություն-ներին մասնակցել է 2032 անձ, թալանին՝ 772, իսկ խմբերի ղեկավարների թիվը 347 էր[21]: Թաղամասերի որոշակի տեղերում նախօրոք կանգնեցրել էին բեռնատարներ և ավտոբուսներ, որոնցում գտնվում էին համապատասխան գործիքներ, մահակներ, որոնց ջարդարարների խմբերը ստանում էին զենքի պես և անցնում իրենց գործողու-թյունների կատարմանը: Երբեմն այդ խմբերին միանում էին փողոցներում կամ սրճարաններում գտնվող այլ թուրքեր ևս՝ ինքնաբուխ կամ թալանելու ակնկալիքով ու մոլուցքով: Ջարդարարների խմբերի ղեկավարներն ունեին ցուցակներ, որտեղ մանրակրկիտ նշված էին կոնկրետ թաղամասում կամ փողոցում գտնվող փոքրա-մասնությունների տների, խանութների, եկեղեցիների հասցեները: Հենց միայն այս փաստը բավական է՝ հասկանալու, որ այդ ամենը նախօրոք կազմակերպված էր պե-տության կողմից: Բացի այդ, հույների, հայերի տների և խանութների վրա նախօրոք նշաններ էին արել, որպեսզի հեշտությամբ գտնեին. այսպես, այդ տների վրա կամ խաչ էր արված, կամ գրված էր GM՝ ոչ մուսուլման, GMR՝ ոչ մուսուլնան հույն: Կարևոր է նկատել,որ ջարդարարներին ինքնաբուխ ուղղորդում էին նաև մուսուլման բնակիչները՝ հայտնելով կամ ցույց տալով իրենց հայ և հույն հարևանների տները կամ խանութները: Մոլագար ամբոխները հարձակվում և պղծում էին անգամ գերեզմանները, հանում աճյունները, փշրում ոսկորները կամ այրում դրանք: Արձա-նագրվել են դեպքեր, երբ գերեզմանից հանել են նոր հուղարկավորված մարդու աճ-յուն և գազազած դանակահարել այն: Ոստիկանության պահվածքը ևս խոսում էր դեպքերի կազմակերպված և իշխանությունների կողմից հրահանգավորված լինելու մասին: Ոստիկանները որևէ կերպ չեն միջամտել և կանխել ջարդարարությունները,

[20]Güven Dilek , « Riots against the Non-Muslims of Turkey: 6/7 September 1955 in the context of demographic engineering », Istanbul, 2011, pp 36,- https://journals.openedition.org/ejts/4538 ( ebook).

[21] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ. էջ 165:

ավելին՝ երբեմն ոգևորել և ուղղորդել են հանցագործներին, ծափահարել նրանց: Բնութագրական օրինակներից է այն, որ երբ ոչ մուսուլման քաղաքացին օգնության խնդրանքով դիմել է ոստիկանին, նա պատասխանել է. << Ես այսօր ոստիկան չեմ, թուրք եմ>>:[22] Հետագայում պարզվել է, որ դեպքերից դեռ մի քանի ժամ առաջ բոլոր ոստիկանական տեղամասերին վերևից հրահանգ է եկել՝ դուրս չգալ ոստիկանության շենքից և որևէ կերպ չմիջամտել դեպքերին: Իզմիրում նույնպես գործի են դրվել նույն մեթոդները, և ջարդարարների խմբերը քաղաքի հունաբնակ թաղամասերում իրականացրել են հարձակում և թալան: Բացի այդ, ամբոխը հարձակվել է Իզմիրում գտնվող Հունաստանի հյուպատոսարանի շենքի վրա, ավերել այն և հետո հրդեհել, որի հետևանքով շենքն ամբողջովին այրվել է: Բողոքի ակցիաներ են տեղի ունեցել նաև Անկարայում, Բուրսայում, Էսքիշեհիրում, Ադանայում, սակայն այնտեղ թալանի և ջարդարաության զանգվածային դեպքեր չեն արձանագրվել:[23] Այս իրադարձությունների ընթացքում սպանվեց 10-12 մարդ, բռնաբարվեց 400-ը, թալանվել և ոչնչացվել են 73 եկեղեցի, 1 ժողովարան, 8 սրբատեղիներ (հուն), 2 վանք, 2 գերեզմանոց, 21 գործարան, 26 դպրոց, 5 մարզական ակումբ, 1004 տներ, 4348 խանութներ, արհեստանոցներ, 27 դեղատներ և լաբորատորիաներ, 110 ճաշարաններ, սրճարաններ, հյուրանոցներ և այլն[24]: Իսկ թուրքական դատարանների տվյալներով՝ սեպտեմբերի 6-7-ի դեպքերի ընթացքում հարձակման են ենթարկվել ոչ մուսուլմանների, հիմնականում՝ հույների և հայեր 4214 տուն, 1004 աշխատավայր, 73 եկեղեցի, 1 սինագոգ, 2 վանք, 26 դպրոց, ինչպես նաև գործարան, հյուրանոց, բար, գերեզմանատուն, դեղատուն, լաբորատորիա, տպարան և այլն: Սպանվել է 15 մարդ, որոնցից հինգը՝ հույն հոգևորական: Պատահական չէ, որ հարձակման ենթարկված ու ծանր վիրավորվածների մեջ զգալի թիվ են կազմել հգևորականները, որոնք, ինչպես Հայոց ցեղասպանության ժամանակ, այնպես էլ այս անգամ, առաջնային թիրախ էին: Ըստ պաշտոնական տվյալների՝ ոչ մուսուլմանական համայնքների պատճառել է 150 միլիոն թուրքական լիրայի վնաս, որը համարժեք էր 54 միլիոն ԱՄՆ դոլարի: Հետագայում պետությունը տուժողներին փոխհատուցել է միայն 60 միլիոն թուրքական լիրա, այսինքն՝ պատճառված վնասի մոտ երրորդի չափ միայն: Իշխանությունները սկսել են գործել միայն սեպտեմբերի 7-

[22] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 166:
[23] Նույն տեղում, էջ 166:
[24] Мелконян Р., О некоторых проблемах армянского нацменьшинства в Турции., «21-й ВЕК», 2010, № 4, с. 86.

ին՝հայտարարելով արտակարգ դրություն Ստամբուլում, Անկարայում և Իզմիրում: Զորք և տանկեր են մտցվել Ստամբուլ, սկսվել են ձերբակալություններ, վարչապետ Մենդերեսը սկզբում այդ դեպքերը ներկայացրել է, որպես թուրք ժողովրդի ինքնաբուխ զայրույթի դրսևորում, սակայն մի քանի օր անց պաշտոնական վարկածը փոխվել է,նշվել է, որ այդ ամենը կազմակերպել են թուրք կոմունիստները, և նույնիսկ մոտ 2000 հոգու ձերբակալել են կոմունիստական հայացքներ ունենալու մեղադրանքով: Կոմունիստներին մեղադրող հայտարարություններով հանդես են եկել նաև երիտասարդական կազմակերպությունները: Այդ հայտարարություններն անմիջապես լայն տեղ են զբաղեցրել մամուլում: Դեպքերից հետո, որպես հրապարակային քայլ, իշխանություններն աշխատանքից հեռացրել են ներքին գործերի նախարար Նամըք Գեդիքին: Սեպտեմբերի 6-7-ի դեպքերի հետ կապված՝ սկզբնական շրջանում թուրքական դատարանները մեղադրանք են առաջադրել 4480 անձի,սակայն ընթացքում նրանց մի մասի մեղադրանքը հանվել է, իսկ արդեն 1995թ.վերջին 3933 հոգի ազատ է արձակվել: 1956թ. հունվարին 61 հոգի արդարացվել է,դատապարտվել է ընդամենը 228 անձ, այն էլ բավական մեղմ պատժամիջոցների[25]: ՈՒշագրավ է, որ սեպտեմբերի 6-7-ի դեպքերից հետո թուրքական քաղաքական դաշտում գործընթաց սկսվեց,որի ժամանակ ընդդիմադիր ՀԺԿ-ն ու ԺԿ-ն հանդես եկան միմյանց քննադատող, մերկացնող հայտարարություններով և ելույթներով, որոնց ընթացքում մի շարք սկանդալային բացահայտումներ եղան: Սակայն սեպտեմբերի 6-7-ի հետ կապված ամենասկանդալային բացահատումը եղավ ավելի ուշ՝ տարատեսակ փաստերի և ապացույցների հիման վրա բացահայտվեց, որ Սալոնիկում Աթաթյուրքի տան վրա ռումբ նետելը իրականում կազմակերպել էին թուրքական հատուկ ծառայությունները՝ իրենց գործակալների միջոցով: Փաստորեն՝ և' Սալոնիկի գործողությունը, և' Ստամբուլում ու այլ քաղաքներում բողոքի հանրավաքների անցկացումը,և զինված հրոսակախմբերի հարձակումները հույների և հայերի տների ու խանութների վրա մեկ միասնական ծրագրի մաս են կազմել,որի կազմակերպիչը թուրքական պետությունն էր՝ իր համապատասխան կառույցներով: Այս միջոցառումները ազգային փոքրամասնությունների շատ ներկայացուցիչների համար դարձավ վերջին կաթիլը, որը լցվեց համբերության բաժակը, և նրանցից շատերը որոշեցին հեռանալ Թուրքիայից: Էթնիկ

[25] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 167:

փոքրամասնությունների նկատմամբ խտրական քաղաքականության մեջ նմանատիպ դրսևորումներ հանդիպում էին նաև այլ ոլորտներում նաև առօրյա կյանքում: Արդյունքում, շատ հայեր սկսեցին գաղթել: Այսօր Թուրքիայիայում մենք ունենք այն, ինչ ունենք: Արժե նշել, որ, բացի Ստամբուլից, Թուրքիայում շատ քիչ քրիստոնյա հայեր են մնացել, որը մեծ դժվարությամբ կարելի է համայնք համարել, իսկ մամուլում կարող ես հանդիպել ասենք, «Դիարբեքիրի վերջին հայը» խորագրերով հոդվածներ կամ «Արաբկիրի վերջին հայը»[26]: Պաշտոնական տվյալներով՝ բացի Ստամբուլից հայեր կան Մալաթիայում, Սեբաստիայում, Անկարայում, Անթաքիայում և Էլազիգում: Լինելով այս տարածքների ինքնավար, հայերը ստեղծել են շատ մշակութային հուշարձաններ, որոնց մեծ մասն այսօր անմխիթար վիճակում է (հատկապես Թուրքիայի արեւելյան շրջաններում): Ակտիվորեն օգտագործվում է «մշակութային ցեղասպանություն» տերմինը միանգամայն տեղին է Թուրքիայի հայկական մշակութային ժառանգությունը: Պետությունը անբարյացակամ է բկապված այս հուշարձանների հետ, ինչը վկայում է նրանց առնչությամբ իրականացվող քաղաքականությունը, որը կարող է ներկայացվել հետևյալ կետերի տեսքով.

- Հայկական պատմական հուշարձանները մնում են առանց ուշադրության և ժամանակի ընթացքում, լքված մնալով, ոչնչացվում են:
- Հայկական եկեղեցիները որպես սեփականություն են փոխանցվել այս տարածքների մահմեդական բնակչությանը, որոնք դրանք տնօրինում են իրենց հայեցողությամբ:
- Պետական շահերի պահպանման պատրվակով ոչնչացվում են պատմական հուշարձանները, մասնավորապես՝ զորավարժությունների ժամանակ օգտագործվելով որպես թիրախ:
- Հայկական եկեղեցիները վերածվում են մզկիթների:

Հավելենք նաև, որ 1955 թ սեպտեմբերի 6-7-ի դեպքերի մասին մինչ օրս էլ արվում են հետաքրքիր և հաճախ սկանդալային բացահայտումներ, որոնք հավելյալ լույս են սփռում տեղի ունեցածի վրա և ավելի հստակ ներկայացումը թուրքական իշխանությունների հանցավոր վարքագիծը: 1960 թ. հոկտեմբերի 14-ին Մարմարա ծովի Յասըադա կղզում սկսվեց 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջումից հետո իշխանու-

[26] Мелконян Р., նշվ. հոդվ., էջ 86:

թյունից հեռացված 592 տարբեր պաշտոնյաների, այդ թվում և Թուրքիայի նախկին նախագահ Ջելալ Բայարի, վարչապետ Ադնան Մենդերեսի, նախարարների, պատգամավորների դատավարությունը[27]: Ներկայացված մեղադրանքների թվում էին նաև 1955 թ. սեպտեմբերի 6-ին և 7-ին Ստամբուլում Իզմիրում հույների ու հայերի նկատմամբ իրականացված ջարդարարությունները: Թուրքական դատարանը փաստացի մեղավոր է ճանաչել պետության բարձրաստիճան պաշտոնյաներին սեպտեմբերի 6-7-ի դեպքերը կազմակերպելու, հրահրելու, չկանխելու մեջ:[28] Սակայն այդ դատավարությունը, միևնույն ժամանակ, տեղավորվում էր ներքաղաքական պայքարի շրջանակներում, առանձնանում էր կոնկրետ Ժողովրդավարական կուսակցության դեմ ուղղված լինելու հստակ միտումնավորությամբ, անտեսվում էր պետական այլ կառույցների՝ հատուկ ծառայությունների, բանակի գերակա դերակատարումը ջարդարարությունների ընթացքում և, փաստորեն, ներկայացվում էր որպես զուտ ժամանակի իշխող կուսակցության ղեկավարների կողմից իրականացված հանցագործություն: Ուշագրավ է նաև, որ թուրքական դատարանը նախկին իշխանությունների մեղքն ապացուցված համարելով հանդերձ՝ սխալ չի համարել Կիպրոսի հարցում Թուրքիայի ակնհայտ ծավալապաշտական նկրտումները: Սեպտեմբերի 6-7-ի դեպքերի դատավարության ողջ ընթացքը, ինչպես նաև դրան հաջորդած զարգացումները պատճառ դարձան, որպեսզի սկսվեն սկանդալային բացահայտումներ, որոնք մեր օրերում ևս երբեմն շարունակվում են: Տարատեսակ փաստերի և ապացույցների հիման վրա բացահայտվեց, որ սեպտեմբերի 6-7-ի դեպքերի նախապատրաստումը և իրականացումը կազմակերպել էին թուրքական հատուկ ծառայություններն իրենց գործակալների միջոցով[29]: Իսկ իշխող վերնախավի ներգրավվածության փաստը նաև ապացուցվում է հենց թուրք բարձրաստիճան պաշտոնյաների տարբեր ժամանակներում արած հայտարարությունների, հարցազրույցների միջոցով: Այդ փաստերը լիովին ապացուցում են ցեղասպանական արարքներում պետության դերի ու դիտավորության հանգամանքի առկայությունը: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ 1955թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերն ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ թուրքական իշխանությունների բռնությունների և հալածանքների քաղաքականու-

[27] Մելքոնյան Ռ.., Թուրքիայի քաղաքականությունը քրիստոնյա փոքրամասնությունների (հայեր, հույներ) նկատմամբ 1920-1960-ական թթ, Երևան, 2019, էջ 29-30:
[28] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 164-165:
[29] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 166-167:

թյան գագաթնակետերից էին, ինչը կործանարար նշանակություն ունեցավ հատկապես հունական համայնքի համար և առաջացրեց արտագաղթի հզոր ալիք:

## 2.2 Թուրքիայում ազգային փոքրամասնությունների սահմանադրական պահանջները, տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականության բաղադրիչ:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունը բազմազգ և բազմադավան պետություն էր, այնուամենայնիվ, տարբեր հանգամանքների պատճառով (Հայոց ցեղասպանություն, էթնիկ զտումներ և այլն), Թուրքիայի Հանրապետությունը ժառանգեց մի երկիր, որտեղ բնակչության մեծամասնությունը մահմեդական ներկայացուցիչներն էին: Այլ դավանանքները փոքրամասնություն են կազմում: Լոզանի պայմանագրի համաձայն՝ երեք օտարերկրյա կրոնական համայնքներ՝ հայկական, հույն և հրեական, ճանաչվել են որպես ազգային-կրոնական էթնիկ փոքրամասնություններ: Փորձագետները նշում են, որ հնարավոր է Թուրքիայում հայերի հետևյալ տիպաբանական բաժանումը երեք խմբերի՝ ըստ էթնո-կրոնական առանձնահատկությունների[30]՝ «Պաշտոնական» հայեր. Այս խումբը գոյատևել է տարբեր շրջաններում և բնակավայրերում՝ Հայ Առաքելական, Կաթոլիկ կամ Ավետարանական եկեղեցու շրջակայքում գտնվող համայնքների տեսքով: «Պաշտոնական» հայերի և Պոլսի կազմակերպված համայնքի միջև կապը քիչ թե շատ պահպանվել է, հատկապես պատմական Կիլիկիայում: «Իսլամացված» հայեր՝ այս էթնո-կրոնական խումբը հիմնականում բաղկացած է պոնտական և համշենահայերի տոհմային խմբերից, որոնք իսլամացվել են 17-18 դարերում: «Ծպտյալ հայեր» («գաղտնի» հայեր)՝ մարդկանց այս խումբը իսլամ ընդունեց բռնի կերպով և ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի ներքո հայկական ջարդերի և, մասնավորապես, 1915 թ. Ցեղասպանության ժամանակ: Այս տեսակն ապրում է բազմաթիվ մեկուսացված քրդական կամ թուրքական գյուղերում: Պետք է ուշադրություն դարձնել այն փաստը, որ Թուրքիայում այլ էթնո-կրոնական խմբերը չեն ստացել առանձին իրավունքներ և կարգավիճակ, և նրանք, իրոք, սկսել են ներկայացվել որպես թուրք ազգի մաս, իսկ ավելի մասնագիտացված շրջանակները նրանց համարում են որպես թուրքերի մեկ այլ էթնոգրաֆիկ խումբ: Սակայն Թուրքիայի նոր Սահմանադրության

[30] Агаджанян М., Дискриминационные элементы национальной политики Турции, «21-й ВЕК», Октябрь, 2006, № 1, с. 104-105.

մեջ փոփոխություններ կատարելու համար առաջարկություն անելու իրավունք էր տրվել նաև հայերին ու այլ ազգային փոքրամասնություններին: Արդյունքում պարզվել է, որ այն առաջարկությունները, որոնք ներկայացրել են ազգային փոքրամասնությունները, կարող են միայն վախի ու պարտադրված հնազանդության արտահայտություն լինել: Թուրքիայի այսօրվա հայ համայնքի կարևորագույն խնդիրներից մեկը նաև կրթության և դպրոցների խնդիրն է: Այս հարցը թուրքական փոքրամասնությունների կրթական խնդիրների մի մասն է, և այդ կապակցությամբ հետաքրքիր փաստեր են հրապարակվել վերջերս «Եվրամիության աջակցությամբ» պատրաստված «Թուրքիայում խտրականության դեմ պայքարը և փոքրամասնությունների իրավունքների խթանումը» զեկույցում[31]: Այսպիսով, ըստ զեկույցում ներկայացված տվյալների, նվազում է Թուրքիայում ազգային փոքրամասնությունների դպրոցների և աշակերտների թիվը, ինչը հիմնականում կապված է պետական քաղաքականության հետ, որում գերակշռում են ձուլման տարրերը: Ավելին, կրթական համակարգին վերաբերող զեկույցի մասը բավականին ուշագրավ վերնագիր ունի. «Մոռանալ, թե՞ ձուլել՝ ազգային փոքրամասնությունները Թուրքիայի կրթական համակարգում»: Թուրքական Սաբահ օրաթերթը ներկայացրել է կրոնական–ազգային փոքրամասնությունների կողմից ներկայացված առաջարկները[32], դրանք էին՝ ազգային փոքրամասնությունների պետական աջակցություն – Լոզանի պայմանագրի 40-րդ հոդվածը ոչ մահմեդական փոքրամասնություններին իրավունք է տալիս հիմնել և ղեկավարել իրենց դպրոցները և այլ հաստատություններ՝ ուսուցման և կրթության համար, դրանց օգտագործման իրավունքով[33]: Մինչև 1974 թվականն այդ պահանջը կատարվել է մասամբ, իսկ դրանից հետո ընդհանրապես դադարեցվել է: Դատախազ, դատավոր և բարձր մակարդակի պաշտոն գրավելու իրավունք՝ մինչ օրս Թուրքիայում ազգային փոքրամասնությունները նման պաշտոններ չեն զբաղեցնում: Համայնքների կրոնական դպրոցների բացում՝ կրոնական փոքրմասնությունները չեն կարողանում կրոնական ծառայողներ կրթել ու պատրաստել Թուրքիայում:

[31] Мелконян Р., О некоторых проблемах армянского нацменьшинства в Турции, «21-й ВЕК», 2010, № 4 , с 88.

[32] Սաբահ օրաթերթ, Թուրքիայում ազգային փոքրամասնությունների սահմանադրական պահանջները, - https://akunq.net/am/?p=17033&fbclid=IwAR3:

[33] Kaya Nurcan, Baldwin Clive, Minorities in Turkey, Stockholm, July 2004, pp 27,- https://minorityrights.org/wp-content/uploads/2021/01/MRG-TurkeySub.pdf ( ebook).

Եկեղեցական ծառայողներին պետական աշխատավարձ, եթե պետությունը իմամներին պետական բյուջեից աշխատավարձ է տալիս, ուրեմն պետք տա նաև քրիստոնյա հոգևորականներին և հուդայական հահամներին: Կրոնի գործերով պետական վարչության բյուջեն պետք է իսլամի մենաշնորհը չլինի: Իրավաբանական անձի կարգավիճակ՝ ազգային-կրոնական փոքրամասնությունները չունեն իրավաբանական անձի կարգավիճակ[34]: Հետևաբար չեն կարող գույք ձեռք բերել և Եվրամիության հիմնադրամներից օգնություն ստանալ: Դպրոցական դասագրքերի վերանայում՝ պատմության և այլ դասագրքերը լի են հայերի, հույների և հրեա ազգերի նկատմամբ թշնամանք հարուցող բովանդակությամբ[35]: Այդ էր նաև պատճառը, որ սպանվեց Հրանտ Դինքը: Ոչ մի խոսք այն մասին, որ ազգային փոքրմասնությունների հարցերը որոշում է Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը և նահանգապետերը: Մինչդեռ մզկիթների և իսլամ դավանող համայնքների հարցերը կարգավորում է Կրոնի հարցերով պետական վարչությունը: Փոքրամասնությունները պոտենցիալ «հանցագործի» կարգավիճակ ունեն: Ոչ մի խոսք չկա փոքրամասնությունների գույքի և եկեղեցիների վերադարձման մասին, որոնք բռնագրավվել են մինչև 1936 թվականը: Ոչ մի խոսք չկա փոքրամասնությունների համայնքների անդամ անձանց ինքնությունը վերականգնելու և անուն ազգանունը վերադարձնելու մասին: Եվ շատ այլ հարցեր, որոնք անհրաժեշտ է բարձրացնել այսօր, այլապես վաղն ուշ կլինի: Նշենք, որ վերջերս Թուրքիայի իշխանությունները և հասարակության մի մասը սկսեցին ավելի շատ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունների խնդրին, քանի որ 1960-ականներին հյուրերի աշխատանքի համար Եվրոպա մեկնած թուրքերը այնտեղ համայնքներ ստեղծեցին, դարձան ազգային փոքրամասնություն և ուտում են «քաղցր ու դառը պտուղները», որոնք բաժին են ընկնում ազգային փոքրամասնությունների մեծամասնությանը: Այսօր թուրքերն իրենք բախվում են ազգային փոքրամասնությունների խնդրի հետ, բայց այլ աշխարհագրական հարթությունում՝ Եվրոպայում, որտեղ կա բազմամիլիոնանոց թուրքական համայնք[36]: Հարկ է նշել, որ Թուրքիայի իշխանությունները միշտ իրենց ուշադրության կենտրոնում են պահել եվրոպական թուրքերի խնդիրը և ամեն կերպ նպաստել են նրանց ազգային և կրոնական

[34] Karimova Nigar, Deverell Edward, <<Minorities in Turkey>>, Occasional Papers , 2011, No. 19, pp 6,-http://miris.eurac.edu/mugs2/do/blob.pdf?type=pdf&serial=1101210931437 ( ebook).
[35] Karimova N ., Deverell E ., նշվ. աշխ., էջ 5.
[36] Мелконян Р., О некоторых проблемах армянского нацменьшинства в Турции, «21-й ВЕК», 2010, № 4 с 88.

ինքնության պահպանմանը՝ դրանով իսկ պայքարելով ձուլման դեմ[37]: Այս հարցին 2008 թ. Վարչապետ Էրդողանը, ով գտնվում էր Գերմանիայում, նույնպես դիմեց կոչ անելով Եվրոպայի թուրքերին ինտեգրվել իրենց հասարակության մեջ, միաժամանակ ամեն կերպ խուսափել ձուլումից: Ավելին, նա կարծիք հայտնեց, ձուլումը հանցագործություն է մարդկության դեմ: «Ոչ մի մարդ, ոչ մի հասարակությունից չի կարող պահանջվել հրաժարվել իր լեզվից, դավանանքից, մշակույթից և սովորույթներ և եթե սա պահանջեք, ապա կմեղանչեք մարդկության դեմ »,- ասել է Էրդողանը: Թուրքական մամուլում հաճախ կարելի է քննարկել և սուր քննադատել տարբեր երկրների թուրքական համայնքներին վերաբերող հարցեր: Վերջին դեպքը վերաբերում է Բուլղարիայի թուրքերի նկատմամբ կիրառվող քաղաքականությանը և նրա քննադատությունը: Բայց իրատես լինելու համար կարող ենք ասել, որ նույն միջոցները մեթոդները, եթե ոչ ավելի խիստ, կիրառվել և կիրառվում են ազգայինի նկատմամբ Թուրքիայում փոքրամասնությունները, ինչը հանգեցրեց նրանց մասնակի կամ ամբողջական ձուլմանը: 1950-ական թթ Երկրում սկսվեց ագրեսիվ արշավ փաստաթղթում չնշված փոքրամասնություններին ձուլելու համար, առաջին հերթին քրդերի, որոնք արդեն հանրապետության հիմնադրման ժամանակ նկատելի թվային ներկայություն ունեին երկրի արևելյան նահանգներում[38]: Վերջապես, ձուլման քաղաքականությունը Օսմանյան կայսրության և Թուրքական Հանրապետության ղեկավարների քաղաքականության հիմնաքարերից մեկն էր: Թուրքիայի Հանրապետությունում որդեգրված և կիրառվող համատարած թուրքացման քաղաքականությունն անխուսափելիորեն պետք է անդրադառնար նաև ոչ թուրքական տեղանուններին, քանի որ այդ տարածքներում բազմաթիվ էին բնիկ ժողովուրդների լեզուներով անվանակոչված վայրերը, որոնք ուղղակի ապացույցն էին նրանց, թեկուզ նախկին, ներկայության: Տեղանունները, միևնույն ժամանակ, ցույց են տալիս պատմական անցյալը, այտեղ բնակված ժողովրդի պատմության,ծտածելակերպի մի շարք մանրամասներ: Այդ է պատճառը, որ միատատրր Թուրքիայի Հանրապետության կայացման գործընթացում տեղանունների թուրքացումը վերապահվել էր կարևոր դեր: Տեղանունների թուրքացումը նոր երևույթ չէր և սկսվել էր օտար,այն է՝ թյուրքական տարրի տարածաշրջան ներթա-

[37] Мелконян Р., նշվ. հոդվ., էջ 89:

[38] Ахметов Тимур, Государство и нацменьшинства в Турции: в поисках общего языка в вопросе образования, Москва, 2017, с 5-6, - https://www.idelreal.org/a/ethnic-minorities-in-turkey-and-their-political-rights/28817690.html (Առցանց հասանելի է 12.01.2021 ).

փացմանը զուգահեռ, սակայն այդ քաղաքականությունն ավելի ընդգծված և համակարգված բնույթ է ստացել XIX դարի կեսերից[39]: Այն ավելի է խորացել երիտթուրքերի օրոք, իսկ հանրապետական Թուրքիայում գտել իր վերջնական լուծումը: Ոչ թուրքական տեղանունների փոփոխության կոնկրետ և ինստիտուցիոնալ կիրառումը սկսվում է 1957թ., երբ հատուկ դրա համար ստեղծվում է << Տեղանունների փոփոխության մասնագիտական հանձնաժողով>>: Դրա մեջ ընդգրկվում են գլխավոր սպայակույտի, ներքին գործերի սպայակույտի, ներքին գործերի, պաշտպանության, կրթության նախարարությունների, Անկարայի համալսարանի լեզվական, պատմաշխարհագրական ֆակուլտետների և <<Թուրքական լեզվաբանական ընկերության>> ներկայացուցիչներ: Հիշյալ հանձնաժողովն ուսումնասիրել է շուրջ 75 հազար տեղանուն և անվանափոխել դրանցից 28 հազարը: Ամենաշատ տեղանուններ փոխվել են Թուրքիայի արևելյան, հարավարևելյան և Սևծովյան շրջաններում, այսինքն՝ հիմնականում պատմական Հայաստանում, ինչպես նաև նախկին հունական տարածքներում: Սև ծովի հարավարևելյան շրջաններում բավական թիվ են կազմում նաև հայկական տեղանունները,քանի որ հիմնականում հենց այստեղ են գտնվում համշենահայերի բնակավայրերը: Հանձնաժողովն ուշադրություն է դարձրել, որ պարտադիր փոփոխվեն այն տեղանունները, որոնց բաղադրիչներից մեկը կարմիր, զանգ, եկեղեցի բառերն են եղել, որոնք բացահայտ ցույց են տալիս դրանց ոչ թուրքական կամ ոչ մուսուլմանական ծագումը, իսկ կարմիր բառն ուներ նաև կոմունիստական երանգ: Տեղանունների թուրքացման քաղաքականությունն անդրադարձել է նաև Ստամբուլի հայկական և հունական փողոցների,թաղամասերի անվանումներին: Ստամբուլում մինչև 1954թ. անվանափոխվել են 100-ից ավելի փողոց, թաղամաս և այդ անվանափոխությունների մեջ որոշակի միտումներն առավել քան ցայտուն են: Մասնավորապես՝ այն թաղամասերում, որտեղ ավելի հոծ ապրում են հայեր,հույներ, նոր տեղանունների մեջ գերիշխում են ազգայնամոլական կամ, այսպես կոչված, << սիմվոլիկ սպառնալիք>> պարունակող անվանումներ: Այսպես,այդ թաղամասերում կարելի է հանդիպել Էրգենեքոն, Թալեաթ փաշա անունները կրող փողոցներ և անգամ դպրոցներ: Այդ տարիներին թուրքական մամուլում բազմաթիվ հասարակական,քաղաքական գործիչներ, մասնագետներ, շարքային ընթերցողներ հանդես էին գալիս ոչ թուրքական

[39] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 168:

տեղանունների, փողոցների, հյուրանոցների, կազմակերպությունների անվանումնե-րի դեմ և սպառնալից առաջարկում արագ փոխել դրանք, այսինքն՝ հասարակության որոշակի մաս ևս մասնակից էր ազգային-կրոնական փոքրամասնությունների դեմ կիրառվող հալածանքին[40]: Այսօր էլ դավանանքային փոքրամասնությունները Թուր-քիայում շարունակում են դիտվել որպես արտաքին միջամտության օտար մի գործիք, որը մշտապես հնարավորություն է ապահովում մեծ տերություններին խառնվելու Թուրքիայի ներքին գործերին[41]:

## 2.3 Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը երկրի քաղաքական կյանքում 1950-1960 թթ

Թուրքիայի Հանրապետությունում հայ համայնքն օբյեկտիվ պատճառներից ել-նելով՝ քաղաքականության նկատմամբ պասիվ դիրքորոշում է որդեգրել: Սակայն ԺԿ իշխանության տարիներին այդ առումով զգալի ակտիվություն է նկատվել, և կուսակ-ցության ցուցակով ԹԱՄԺ պատգամավոր են դարձել երեք հայազգի գործիչներ. 1950-1954թթ՝ Անդրե Վահրամ Բայար Քոջաբլյուքյանը, 1954- 1960թթ՝ Զաքար Թարվերը, 1957-1960թթ՝ Մկրտիչ Շելեֆյանը: Ավելի ուշ՝ 1960թ. ռազմական հեղաշրջումից հե-տո, Թուրքիայի օրենսդիր մարմնում պետության կողմից նշանակվում են երկու հայազգի սենատորներ՝ Հերմինե Աղավնի Գալուստյանը և Սահակ Պերճ Թուրան: Զաքար Թարվերը ( 1894-1960թթ) ծնվել է Ակնում,իսկական անունն է Ռուբեն-Զաքար Զաքարյան, սակայն ավելի ուշ՝1934թ., Թուրքիայում ազգանվան մասին օրենքի ընդունումից հետո, վերցրել է Զաքար Թարվեր անուն-ազգանունը: Ընտանիքը Ակ-նում զբաղվել է տեքստիլի առևտրով, սակայն սաստկացող հակահայկական տրամա-դրությունները, սկիզբ առած համիդյան ջարդերը հարկադրում են նրանց 1895թ փախ-չել Ստամբուլ: Զաքար Թարվերն ուսանել է Ստամբուլի բժշկական համալսարանի ռադիոլոգիայի ֆակուլտետում,որն ավարտել է 1917թ, իսկ այնուհետ՝ 1919-1922թ, ուսումը կատարելագործել Ֆրանսիայում[42]: Ավելորդ չէ նշել, որ Զաքար Թարվերն Ա-ռաջին համաշխարհային պատերազմի տարիներին որպես բժիշկ ծառայել է օսման-

[40] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 169:
[41] Հովհաննիսյան Հ, Յավրումյան Մ, Քոչարյան Հ , Կրոնական գործոնը հայ-թուրքական հարաբերություններում՝ նոր ադապտացիոն մեխանիզմների մշակման գործում, Եր., 2014 , էջ 22: https://cccsysu.com/wp-content/uploads/2015/05/Arm-Turk-adaptacia.pdf ( ebook )
[42] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 170-171:

յան բանակում, և երևի մասնագիտության բերումով կարողացել է փրկվել կոտորածից: Սկսած 1923 թ.՝ նա աշխատել է Ստամբուլի հայտնի Սուրբ փրկիչ հայկական հիվանդանոցում, 1927-1933 թթ եղել է ռադիոլոգիայի կլինիկայի ղեկավար, իսկ 1948-1955թթ՝ գլխավոր բժիշկ: Տարբեր աղբյուրներում հանդիպում է այն տեղեկությունը, որ հենց Զաքար Թարվերն է Թուրքիա ներմուծել առաջին ռենտգեն սարքը: Լինելով միջազգային համարում ունեցող բժիշկ և ժամանակի կրթված մտավորականներից՝ նա տիրապետել է մի քանի լեզուների՝ հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն,գերմաներեն, ռուսերեն և լուրջ ներդրում ունի Թուրքիայում բժշկության զարգացման գործում: Զաքար Թարվերի նկատմամբ հանրապետական Թուրքիայում չեն դադարել հալածանքները, և նա հազարավոր այլ հայերի հետ միասին 1942թ ենթարկվել է « 20 դասակարգի զորակոչի»: Նա ստիպված է եղել 48 տարեկանում կրկին մեկնել զինծառայության և տաժանակրություն անել Սեբաստիայում տեղակայված աշխատանքային ճամբարներում: Այդ տարիներին իշխող և հակահայկական քաղաքականություն վարող քեմալական կուսակցության նկատմամբ ատելությունն էլ ստիպել է Զաքար Թարվերին քաղաքականություն մուտք գործելուց հետո նախընտրել ՀԺԿ-ին ընդդիմադիր Ժողորվրդավարական կուսակցությունը: Սկսելով քաղաքային գործունեությունը՝ Զաքար Թարվերը նախ ընտրվել է Ստամբուլի քաղաքային ավագանու անդամ, իսկ 1954թ ԺԿ առաջարկելով և նրանց ցուցակով՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր[43]: Հաջորդ՝1957 թ ընտրություններին ևս Զաքար Թարվերն ընտրվել է պատգամավոր: 1960թ Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո ձերբակալված 600 պետական պաշտոնյաների մեջ է լինում նաև Զաքար Թարվերը, որը, ըստ պաշտոնական վարկածի, ձերբակալությունից կարճ ժամանակ անց մահանում է, որ Զաքար Թարվերը ենթարկվել է կտտանքների և ծեծի ու իրականում մահացել ուղեղի արյան զեղումից: Սակայն Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավորի սպանությունը նույնիսկ չի էլ դարձել հետաքննության նյութ, և թուրքական իշխանությունները քողարկել են այն: Ժամանակի մամուլը գրեթե չի արձագանքել այդ դեպքին, միայն Ստամբուլի հայկական «Ժամանակ» օրաթերթում տպագրվել են հակիճ տեղեկատվություն և հանգուցյալ պատգամավորի համառոտ կենսագրությունը: Սակայն վերը թվարկված բոլոր պատգամավորների շարքում

[43] Նույն տեղում, էջ 170-171:

հատկապես առանձնանում է Մկրտիչ Շելեֆյանը, որի նպաստը համայնքային և ազգային խնդիրներին անուրանալի է: Դրամատիկ զարգացումներով հա- րուստ իր կյանքի տարբեր փուլերում Մկրտիչ Շելեֆյանը եղել է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության, Ստամբուլի հայ համայնքի, ինչպես նաև գավառներում մնացած իսլամացված հայերի խնդիրների, հետագայում նաև Հայաստանի խորհրդային հանրապետության և Սփյուռքի հարաբերությունների կիզակետում: Մկրտիչ Շելեֆ- յանը ծնվել է 1914թ. Ադափազարում: Հայրը երկաթի վաճառական Գրիգոր Շելեֆյանն էր, մայրը՝ Քրիստինե Նիկողոսյանը[44]: Հայոց ցեղասպանության ժամանակ Շելեֆյան- ների ընտանիքը տեղափոխվել և ապաստանել է Քյութահիայում: Ցեղասպանության առաջին ալիքից հետո հրաշքով փրկված ընտանիքը կրկին վերադարձել է Ադափա- զար, սակայն ավելի ուշ քեմալականների առաջխաղացման ժամանակ տեղափոխվել և հաստատվել է Ստամբուլում՝ կորցնելով ունեցվածքի մեծագույն մասը: Շելեֆյան- ները խստորեն պահպանել են ազգային նկարագիրը, և ամենևին էլ երկրորդական չպետք է համարել այն, որ ընտանիքում հայախոսությունը եղել է բարձր մակարդակի վրա: Մկրտիչ Շելեֆյանի մայրը նույնիսկ վատ է տիրապետել թուրքերենին: Մկրտիչ Շելեֆյանը երիտասարդ տարիքից ներգրավվել է առևտրական գործունեության մեջ, իսկ զինվորական ծառայությունից հետո՝ 1941թ., սկսել է կառավարել հոր բիզնեսը՝ երկաթի առևտուրը: 1950թ. ամուսնացել է կեսարացի վաճառական ընտանիքի զավակ Երջանիկ Թահթաբուրունյանի հետ, այս ամուսնությունից ծնվել են նրա երկու զա- վակները՝ Արդենն ու Քրիստինեն: Պոլսահայ գրող Վարդան Կոմիկյանը Շելեֆյանի մասին իր հոդվածում նշում է. «Առեւտրական հանճար մըն էր: Կան որ արուեստա- գէտ կը ծնին, Շէլլէֆեան վաճառական էր ծնած»[45]: Առևտրական և կազմակերպչական հմտությունների շնորհիվ Մկրտիչ Շելեֆյանը հետզհետե սկսել է որոշիչ դեր խաղալ Ստամբուլի հայ համայնքում: 1951թ. դարձել է Պոլսո հայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյանի խորհրդականը, 1953թ. ընտրվել է Թուրքիայի հայերի ազգային կենտրոնական վարչության ատենապետ: Այս կառույցը, ըստ էության, Թուրքիայի հայերի կառավարման աշխարհիկ մարմինն էր, ատենապետը՝ համայնքի ղեկավա- ը: 1955թ. Մկրտիչ Շելեֆյանն ընտրվել է Ստամբուլի քաղաքապետարանի ավագանի

[44] Մելքոնյան Ռ. , Մկրտիչ Շելեֆյան. վերջին հայ պատգամավորը, Թուրքական խորհրդարանում, «21-րդ ԴԱՐ» ամսագիր, 2018, թիվ 6, էջ 17-18:
[45] Նույն տեղում, էջ 17-18:

և այդ պաշտոնը զբաղեցրել մինչև 1957թ.: Գործունեության հենց սկզբից դրսևորվել է Շելեֆյանի ազգային նկարագիրը: Դեռևս 1934թ. ազգանվան օրենքի ընդունումից հետո փորձել են փոխել և թուրքացնել նրա ազգանունը՝ դարձնելով Շելեֆօղլու, սակայն նա կտրուկ դեմ է դուրս եկել և կարողացել պահպանել իր ազգանունը: Ստամբուլի քաղաքապետարանի ավագանի եղած տարիներին Շելեֆյանը կարողանում է լավ կապեր հաստատել թուրք ամենատարբեր պաշտոնյաների, անգամ վարչապետ Ադնան Մենդերեսի հետ և այդ ամենը ծառայեցնել համայնքի շահերին: Այսպես, մեծապես նրա ջանքերով է բացվում Ստամբուլի Սուրբ Խաչ դպրեվանքը, որի կարևոր գործառույթներից էր Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված և ուծացած հազարավոր հայերի երեխաներին Ստամբուլ տեղափոխելով՝ հայեցի կրթություն տալն ու այդ միջոցով ազգային ակունքներին վերադարձնելը: Իր այս գործունեության համար Շելեֆյանը բազմիցս է քննադատվել ազգայնամոլական և մոլեռանդ շրջանակների կողմից, որոնք նրան մեղադրել են «մուսուլման» երեխաներին քրիստոնեացնելու մեջ: Այդ տարիներին Մկրտիչ Շելեֆյանը կարողացել է թույլտվություն ստանալ Գալաթիայի քանդված հայկական եկեղեցու վերականգնման համար: Հարկ է հատուկ շեշտել, որ այդ եկեղեցին վերակառուցվել է հայկական ճարտարապետական ոճով, ինչը եզակի երևույթ է Ստամբուլում: Այս և նմանատիպ այլ ծառայությունների համար նա արժա- նացել է Ստամբուլի հայ համայնքի երախտագիտությանը, և պատահական չէ, որ Մկրտիչ Շելեֆյանի մահվան օրը՝ 1987թ. դեկտեմբերի 10-ը, համայնքում և Պոլսո պատրիարքարանում հայտարարվել է սգո օր[46]: Իր ակտիվ գործունեությունը, ինչպես նաև համայնքում ունեցած հեղինակությունը ստիպել են, որպեսզի Մկրտիչ Շելեֆյանով հետաքրքրվեն թուրքական իշխանությունները. 1957թ. խորհրդարանական ընտրություններից առաջ իշխող Դեմոկրատական կուսակցության կողմից նա առաջարկ է ստացել կուսակցական ցուցակով մասնակցել ընտրություններին: Շելեֆյանը սկզբում մերժել է այդ առաջարկը՝ պատճառաբանելով իր բազմազբաղությունը, սակայն ավելի ուշ տեղի է տվել և ընդունել անձամբ Թուրքիայի վարչապետ Ադնան Մենդերեսի առաջարկը՝ մասնակցել ընտրություններին: Ինչպես հետագայում պատմել է Մկրտիչ Շելեֆյանը, նա այդ ժամանակ Պոլսո պատրիարք Գարեգին Խաչատուրյանի հետ եղել է Լոնդոնում, և վարչապետ Մենդե-

[46] Մելքոնյան Ռ., նշվ. Հոդվ., էջ 19-20:
[46] Նույն տեղում, էջ 19-20:

բեսն այնտեղի թուրքական դեսպանատան միջոցով գտել է Շելեֆյանին ու հեռախոսային զրույցում համոզել է համաձայնություն տալ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար: Ավելորդ չէ նշել, որ Շելեֆյանի դրական պատասխանի վրա որոշիչ ազդեցություն է ունեցել նաև Գարեգին պատրիարքի դիրքորոշումը: Այս հարցում և՛ հոգևորական, և՛ աշխարհիկ գործիչների համար առաջնային են եղել հայ համայնքի շահերը, իսկ պատգամավորի հանգամանքը Շելեֆյանին թույլ կտար էլ ավելի արդյունավետ նպաստել համայնքային որոշ խնդիրների լուծմանը: Սակայն Շելեֆյանին պատգամավոր առաջադրելով՝ Դեմոկրատական կուսակցությունը ևս ակնկալում էր որոշակի օգուտներ, քանի որ նրա հեղինակության շնորհիվ իշխող կուսակցությունը մեծ թվով ձայներ էր ստանալու հայ համայնքից: Նկատենք նաև, որ Դեմոկրատական կուսակցության քաղաքական հակառակորդը՝ քեմալական Ժողովրդահանրապետական կուսակցությունը, որը մինչև 1950թ. միանձնյա իշխում էր Թուրքիայում, ազգային փոքրամասնությունների և հատկապես հայերի նկատմամբ վարել էր, մեղմ ասած, ծայրահեղ խտրական քաղաքականություն: Դա էլ ավելի սրվեց Թուրքիայի երկրորդ նախագահ և ԺՀԿ առաջնորդ Իսմեթ Ինենյուի կառավարման տարիներին՝ 1938-1950թթ., Ազգային փոքրամասնությունները խոր հակակրանք էին տածում վերջինիս հանդեպ[47]: Մկրտիչ Շելեֆյանի քաղաքական նախընտրության մեջ որոշակի դեր է ունեցել նաև այդ հանգամանքը: Ինչևէ, Մկրտիչ Շելեֆյանը մտել է մեծ քաղաքականություն և 1957թ. ընտրվել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր: Հարկ է հատուկ շեշտել այն ուշագրավ փաստը, որ պատգամավոր ընտրվելուց հետո ընդգրկվել է խորհրդարանի բյուջեի հանձնաժողովի մեջ, որտեղ քննարկվել են տարբեր աստիճանի պետական գաղտնիքներ՝ կապված նաև ազգային անվտանգության համակարգի հետ, և շատ հաճախ հանձնաժողովի նիստերն անցկացվել են դռնփակ: Մկրտիչ Շելեֆյանն ազգային փոքրամասնությունների միակ ներկայացուցիչն էր, որն ընդգրկվել է այդ հանձնաժողովում և, փաստորեն, «մուտք է ունեցել» պետական գաղտնիքներին[48]: Պատգամավոր աշխատելու տարիներին Շելեֆյանը լայն թափով շարունակել է հայ համայնքի խնդիրների լուծմանն ուղղված գործունեությունը, և այդ ընթացքում համայնքում դրական առաջընթաց է նկատվել: Չպետք է անտեսենք նաև այն իրողությունը, որ թուրքական խորհրդարանի պատգամավոր

[47] Մելքոնյան Ռ., նշվ. Հոդվ., էջ 22:
[48] Նույն տեղում էջ 22:

լինելով հանդերձ՝ նա մշտապես կարևորել է իր հայկական ինքնությունը: Նրանց տանն անգամ արգելված են եղել թուրքերենն ու թուրքական երաժշտությունը: 1960թ. ձերբակալվածների մեջ էր նաև Մկրտիչ Շելեֆյանը: Նրան առաջարկվել է մեղադրանք հակասահմանադրական գործողությունների համար: Ձերբակալվել է նաև մյուս հայ պատգամավորը՝ բժիշկ Զաքար Թարվերը: Ինչպես հետագայում պատմել է Մկրտիչ Շելեֆյանը, Յասըադա կղզի տեղափոխվելու ժամանակ ուղեկցող զինվորներից մեկը հրացանով հարվածել է Զաքար Թարվերի գլխին: Ստացված վնասվածքից նա մեկ ամիս անց մահացել է բանտում: Ուշագրավ է, որ Շելեֆյանը խիզախ պահվածք է դրսևորել և՛ նախաքննության, որն ուղեկցվել է դաժան կտտանքներով, և՛ դատական նիստերի ժամանակ: Մասնավորապես՝ առաջադրված մեղադրանքի շրջանակներում քննվել են խորհրդարանի մի նիստ և այնտեղ ընդունված որոշումը: Չնայած Շելեֆյանն այդ նիստին մասնակցած չի եղել, սակայն կուսակցական համերաշխությունից ելնելով հայտարարել է. «Այդ որոշումներուն ատեն ես Անգարա չէի, բայց եթէ Անգարա գտնուէի, ես ալ ի նպաստ կը քուէարկէի: Հետս վարուեցէք այնպէս ինչպէս պիտի վարուէիք եթէ հոն ըլլայի»[49]: Դատավարության արդյունքում Շելեֆյանը դատապարտվել է 4,5 տարվա ազատազրկման և տեղափոխվել Կեսարիայի բանտ, նրա ամբողջ ունեցվածքը բռնագրավվել է: Հետաքրքիր է, որ Շելեֆյանն ազատազրկումն անցկացրել է Թուրքիայի երրորդ նախագահ Ջելալ Բայարի հետ նույն խցում: Մկրտիչ Շելեֆյանի հետ նույն բանտախցում անցկացրած տարիների ընթացքում նրանք բավական մտերմացել են, և զրույցների ընթացքում Շելեֆյանը բազմաթիվ դրվագներ է պատմել հայ ժողովրդի պատմությունից, մշակույթից, ավանդույթներից, ինչից հետո Բայարը հայտարարել է, որ նոր-նոր է սկսում ճանաչել հայերին և այն էլ՝ Շելեֆյանի շնորհիվ 1962թ. նորաստեղծ Արդարություն կուսակցությունը ջանքեր է գործադրել ռազմական հեղաշրջումից հետո դատապարտված պաշտոնյաներին և պատգամավորներին ազատ արձակելու ուղղությամբ, և հենց նույն տարում 280 մարդ ազատվել են բանտերից, այդ թվում և Շելեֆյանը[50]: Ազատ արձակվելուց հետո քայլեր է ձեռնարկել իր բիզնեսի վերականգնման ուղղությամբ: Ստեղծված իրավիճակում նա հրաժարվել է նորից մտնել ակտիվ քաղաքականության

[49] Նույն տեղում, էջ 22:

[50] Մելքոնյան Ռ.., Հայ պատգամավորները Թուրքիայի Հանրապետության խորհրդարանում ( 1935-1960 թթ), Արևելագիտության հարցեր, 2012, թիվ 7, էջ 183:

մեջ[51]: Հրաժարվելով առաջարկվող պաշտոններից՝ Շելեֆյանը կրկին լծվել է հայ համայնքի խնդիրների լուծման գործին, և վարչապետ Դեմիրելի հետ ունեցած մտերմությունը կրկին ծառայեցրել համայնքային շահերին: 1960թ. ռազմական հեղաշրջումից հետ լուծարվել և արգելվել է հայ համայնքի աշխարհիկ կառավարման մարմինը՝ Թուրքիայի հայերի ազգային կենտրոնական վարչությունը, սակայն այդ պայմաններում ևս Շելեֆյանը մնացել է համայնքի դեֆակտո աշխարհիկ ղեկավարը և շարունակել է ապահովել թուրքական կառավարության և հայ համայնքի միջև կապը: Այդ շրջանում նա դարձել է համայնքային ամենամեծ հաստատության՝ Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Կարևոր է նկատել, որ Մկրտիչ Շելեֆյանը կարողացել է իր կապերն ու հեղինակությունն օգտագործել ոչ միայն նեղ համայնքային խնդիրների լուծման համար, այլև ավելի լայն համազգային խնդիրներում ևս[52]: Նմանատիպ օրինակներից հարկ ենք համարում մեջբերել մեկը, որը, թերևս, առաջին անգամ է հրապարակվում և դրվում գիտական շրջանառության մեջ: Այսպես, 1965թ. ապրիլի 24-ին, երբ Երևանում, Ծիծեռնակաբերդում պատրաստվել են նշել Հայոց ցեղասպանության 50-ամյակը, թուրքական իշխանությունները որպես հակաքայլ պահանջել և ստիպել են, որպեսզի Ստամբուլի հայ համայնքը քաղաքի կենտրոնական հրապարակներից մեկում՝ Թաքսիմում, բողոքի ցույց կազմակերպի ընդդեմ ցեղասպանության հարցի: Սրանով թուրքական իշխանությունները փորձում էին սեպ խրել հայության մեջ և աշխարհին ցույց տալ, որ Թուրքիայի հայերն այլ կարծիքի էին[53]: Շելեֆյանն ամբողջովին իր վրա է վերցրել իշխանությունների ծրագրի տապալման պատասխանատվությունը: Ստամբուլի վարչության պետի մոտ ցուցաբերելով համարձակություն՝ Շելեֆյանը հայտարարել է, որ 1915 թվականին անձամբ իր ընտանիքից 10 հոգի է զոհվել, և ապրիլի 24-ը հայերի համար սգո օր է, ոչ թե հրապարակային միջոցառումների: Ընդհանրապես, Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ Շելեֆյանը դրսևորել է հստակ դիրքորոշում. հրապարակային ելույթների ժամանակ չի անդրադարձել այդ թեմային, սակայն միևնույն ժամանակ չի էլ արտահայտել թուրքական պաշտոնական թեզի պարտադրած մոտեցումները:

---

[51] Մելքոնյան Ռ. , Մկրտիչ Շելեֆյան. վերջին հայ պատգամավորը, Թուրքական խորհրդարանում, «21-րդ ԴԱՐ» ամսագիր, 2018, թիվ 6, էջ 22-23:

[52] Մելքոնյան Ռ, նշվ. հոդվ., էջ 22-23:

[53] Մելքոնյան Ռ., Հայ պատգամավորները Թուրքիայի Հանրապետության խորհրդարանում ( 1935-1960 թթ), Արևելագիտության հարցեր, 2012, թիվ 7, էջ 186:

Կիպրոսի խնդրի հետ կապված Թուրքիայի և Հունաստանի լարված հարաբերությունների ժամանակ Շելեֆյանը մի քանի գաղտնի հանդիպում է ունեցել հունական զինվորական և քաղաքական բարձրաստիճան ղեկավարների, այդ թվում և վարչապետեր Պապանդրեուի ու Ստեֆանոպուլուսի հետ: Այս ամենի արդյունքում կասեցվել է թուրքական ռազմական ներխուժումը Կիպրոս: Այդ իրադարձություններից տարիներ անց էլ՝ 1984թ., Մկրտիչ Շելեֆյանը չի բացում բոլոր փակագծերը՝ կապված Թուրքիայի և Հունաստանի միջև իր միջնորդական գործունեության հետ. «Դեռ ժամանակը չէ հասած հրապարակելու թէ ինչեր էին անոնք: Պետական գաղտնիք են եւ մինչեւ այսօր չեն հրապարակուած: Օր մը եթէ ժամանակը գայ, այդ մասին ալ կը խօսինք»[54]: Բանակցելու համար նրա թեկնածության ընտրությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Շելեֆյանը մի կողմից եղել է Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի վստահելի մարդը, մյուս կողմից՝ մեծ հեղինակություն է վայելել հունական կողմում: Այդ վստահությունը բխել է նաև նրանից, որ նա ժամանակին մեծ ուշադրություն է դարձրել և զգալի օգնություն ցույց տվել Ստամբուլի հունական համայնքին ու Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքությանը: Պոլսո հունաց տիեզերական պատրիարք Աթենագորասը հիանալի հարաբերություններ է ունեցել Մկրտիչ Շելեֆյանի հետ, իսկ վերջինս իր այդօրինակ վերաբերմունքը հունական համայնքի նկատմամբ բացատրել է նրանով, որ փոքրամասնությունները Թուրքիայում ունեն նմանատիպ խնդիրներ և պետք է համախմբված լինեն, քանի որ մեկի տկարացումն ազդելու է մյուսի վրա: Մեզ մոտ է գտնվում Հունաց պատրիարքի տված շնորհակալագիրը Մկրտիչ Շելեֆյանին, որը պահվում է նրա անձնական արխիվում: Շնորհակալագրում երախտիքի բազմաթիվ խոսքեր են շռայլված, ինչպիսիք են. «Երախտապարտ ենք Ձերդ սիրելի Ազնվափայլությանը մեր գործերի մասին հետաքրքրվելու, ինչպես և Ձեր անգնահատելի ծառայությունների համար»[55]: 1970թ. Ստամբուլում սպանված մի վարձու մարդասպանի գրպանից ոստիկանները գտել են Շելեֆյանի անունն ու հասցեն, այսինքն՝ սպանվելու վտանգն ավելի ռեալ էր դարձել: Այս ամենը հարկադրել է Մկրտիչ Շելեֆյանին, մտածելով ընտանիքի անվտանգության մասին, նրանց հեռացնել Թուրքիայից: Այդ ժամանակ որդին՝ Արդենը, ուսա-

[54] Մելքոնյան Ռ., նշվ. հոդվ., էջ 185-186:
[55] Մելքոնյան Ռ. , Մկրտիչ Շելեֆյան. վերջին հայ պատգամավորը, Թուրքական խորհրդարանում, «21-րդ ԴԱՐ» ամսագիր, 2018, թիվ 6, էջ 24:

նելիս է եղել Շվեյցարիայում, և Շելեֆյանը որոշում է այնտեղ տեղափոխել կնոջն ու աղջկան, իսկ ինքը՝ վերադառնալ Թուրքիա և փորձել դիմակայել: Սակայն Թուրքիայից նրա հեռանալուց երկու օր անց ամբողջ թուրքական մամուլը հեղեղվել է այն տեղեկությամբ, թե իբր Մկրտիչ Շելեֆյանը փախել է երկրից՝ իր հետ տանելով ահռելի գումար: Ստեղծված իրավիճակն արդեն անհնար է դարձրել նրա վերադարձը Թուրքիա, իսկ մտերիմները, այդ թվում և քաղաքական գործիչները, խուսափել են օժանդակել նրան՝ վախենալով իրենց քաղաքական հեղինակության և անվտանգության համար: Այդպիսով՝ 1970թ. Մկրտիչ Շելեֆյանը հաստատվում է Շվեյցարիայում: որտեղ դառնում է շվեյցարահայ համայնքի ազդեցիկ անուններից մեկը[56]: Հայաստանի ազգային արխիվում, ՀԽՍՀ Սփյուռքահայերի հետ մշակութային կապերի հանրապետական կոմիտեի ֆոնդերից մեկում հանդիպում ենք Շելեֆյանի՝ Շվեյցարիայում իրականացրած գործունեության մասին հետևյալ տեղեկությանը. «Շելեֆյանը պետական գործչի իր ողջ փորձը, դիվանագիտական ընդունակությունները և, ի վերջո, ժամանակը ի սպաս է դրել հայ համայնքի համար»: Մկրտիչ Շելեֆյանը լուրջ ներդրում է ունեցել շվեյցարահայ համայնքի և Խորհրդային Հայաստանի կապերի ամրապնդման հարցում: Շելեֆյանի վրա իրոք մեծ տպավորություն է թողել Հայաստանը, և իր այցերի մեկնարկից արդեն երկու տարի անց՝ Վ.Համազասպյանին ուղղված նամակում նա չի թաքցնում հիացմունքն ու հոգեկան ապրումները. «Ուրախութիւն պատճառեց նաեւ մեզի այն զգալի բարեփոխումները, գրեթէ ամէն մարզի մէջ: Սեւանի ճամփուն եզերումներու սարքաւորումը ո՞րքան գունագեղ ու շէնշող է…»: Խոսելով իրեն Թուրքիայի քաղաքացիությունից զրկելու սպառնալիքի մասին՝ Մ.Շելեֆյանը հատուկ ընդգծելով նշում է. «Եկող և գնացող ոչ մի կառավարություն չի կարող ինձնից խլել այն իրողությունը, որ ես այս հողերի հարազատ զավակն եմ, հողեր, որտեղ դարերով ծնվել ու ապրել են իմ նախնիները: Եվ մի կարծեք, որ ես այս հեռագիրը ուղարկում եմ ձեր որոշումը փոխելու նպատակով: Իմ ցեղի մեջ խնդրել, մուրալ, պնակալեզություն բառերը գոյություն չունեն»: Այս նամակից տասն ամիս անց՝ 1984թ. հունիսի 22-ին, Շվեյցարիայում (Ժնև) Թուրքիայի հյուպատոսությունից փոխհյուպատոս Օմեր Թարքանի ստորագրությամբ պաշտոնական գրություն է ուղարկվում Մկրտիչ Շելեֆյանին, որտեղ նշված է. «Քանի որ հրապարակման օրվանից մեկ ամսվա ընթացքում հայրե-

[56] Մելքոնյան Ռ., նույն տեղում:

նիք չեք վերադարձել և համապատասխան մարմիններին չեք հանձնվել՝ Թուրքիայի քաղաքացիության թիվ 403 օրենքի 25-րդ հոդվածի համաձայն զրկվել եք Թուրքիայի քաղաքացիությունից: Նույն որոշմամբ նախատեսվում է ձեր գույքը փոխանցել գանձարանին»[57]: Ավելին՝ թուրքական իշխանությունները Մկրտիչ Շելեֆյանի՝ Թուրքիայի նախագահ Քենան Էվրենին ուղղված նամակը համարելով անարգանք և սպառնալիք, նրա դեմ քրեական գործ են հարուցում Անկարայի դատարանում: Այսպիսով՝ կարող ենք նշել, որ 20-րդ դարի պոլսահայ և սփյուռքահայ իրականության մեջ Մկրտիչ Շելեֆյանը քաղաքական, համայնքային գործչի, հմուտ դիվանագետի և գործարարի վառ կերպ/ար է: Իր գործունեության մեծ մասը ծավալելով Թուրքիայում՝ նա կարողացել է պահպանել և հպարտանալ իր ազգային ինքնությամբ, արժանապատիվ պահվածքով հասել է որոշակի դիրքերի և այդ ամենը ծառայեցրել համայնքային ու ազգային շահերին: Մկրտիչ Շելեֆյանի օրինակը նաև ցույց է տալիս, որ ցանկության և համարձակության դեպքում հնարավոր է հայկական նկարագիրը պահպանել և հայեցի գործել անգամ թուրքական դժնդակ իրականության մեջ: Խոսելով ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառված հալածանքների մասին՝ չենք կարող չանդրադառնալ 1955թ. սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցած հայերի ու հույների նկատմամբ ջարդարարություններին, որոնք կազմակերպված էին իշխանությունների կողմից, իսկ այդ ժամանակ արդեն իշխում էր Դեմոկրատական կուսակցությունը: Սա վկայում է այն մասին, որ անկախ իշխանության ղեկին գտնվողների քաղաքական կողմնորոշումից, ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական քաղաքականությունը եղել է ընդգծված թշնամական: Վերը նշվածից պարզ է դառնում, որ 1955թ. սեպտեմբերի 6-7-ի հարձակումների ժամանակ ավերվել են բազմաթիվ տներ, խանութներ, արհեստանոցներ, բռնությունների են ենթարկվել հարյուրավոր մարդիկ: Այդ դեպքերից հետո կառավարությունը փորձել է մեղմել իրավիճակը՝ փոխհատուցում տալով տուժածներին, և Մկրտիչ Շելեֆյանն անձամբ է բանակցել վարչապետի քարտուղարության հետ այդ հարցերի շուրջ:

[57] Նույն տեղում, էջ 24:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՐ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

## 3.1 Իսլամի դերի բարձրացումը և քաղաքանացումը

1940-ականների վերջին քաղաքական կուսակցությունները և գործիչները սկսեցին իսլամին ավելի մեծ տեղ տալ: Թուրքիայում հետզհետե ավելի իրական էր դառնում <<քաղաքական իսլամի>> վերելքը: ԺԿ իշխանության գալով այդ գործընթացը լայն թափ ստացավ: Էզանն արաբերեն ընթերցքլու մասին օրենքի ընդունումից հետո Մենդերեսի կառավարությունը սկսեց ուշադրություն դարձնել իսկամի լեզվի՝ արաբերենի մակարդակին: ԺԿ պատգամավոր Ա.Գյուրքիանը խորհրդարանում հանդես եկավ բուհերում արաբերեն դասավանդելու օրենսդրական առաջարկությամբ, ինչը հավանության արժանացավ ԹԱՄԺ-ի կողմից[58]: Այդ տարիների հասարակաան-քաղաքական օրակարգում սկսեցին ավելի շատ հնչել հնին վերադառնալու կոչեր, մասնավորապես՝ մուսուլմանական հանդերձանքի պարագաների՝ ֆեսերի, չադրաների վերականգնումը, ուրբաթ օրը որպես ոչ աշխատանքային ընդունելը, բազմակնության իրավական թույլատրումը և այլն: Իշխանությունները մեծ ուշադրություն էին դարձնում մզկիթաշինությանը. 1951-1959թթ. ընթացքում Թուրքիայում կառուցվել է 25000 մզկիթ: Արդեն 1960թ Թուքիայում կար մոտ 55000 մզկիթ, որն ավելի շատ էր, քան դպրոցների թիվը: Իսկ անգրագիտության մակարդակը Թուրքիայում շարունակում էր մնալ աշխարհում ամենաբարձրներից մեկը, որը, ըստ ՅՈՒ/ՆԵՍԿՕ-ի, գաղութային երկրների հետ գրեթե հավասար էր[59]: Մզկիթների կառուցման հարցը ԺԿ-ն և անձամբ վարչապետ Մենդերեսն օգտագործում էին նաև միջկուսակցական պայքարում. քննադատելով ՀԺԿ-ին՝ նա հայտարարել էր, որ ՀԺԿ իշխանության տարիներին պետությունը վաճառել է 800 մզկիթ, իսկ մի քանիսն էլ տվել է քրիստոնյաների: Այս հայտարարության երկրորդ մասն իրոք ուշագրավ է այն առումով, որ ենթադրաբար այդ «տրված» մզկիթներն իրականում եղել են քրիստոեական եկեղեցիներ, որոնք վերածվել են մսկիթների: ԺԿ իշխանության տարիերին Թուրքիայում ակտիվ գործունեություն էի ծավալել մոտ 50 մեծ ու փոքր կրոնական եղբայրություններ և հոսանքեր,

[58] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 174:
[59] Նույն տեղում, էջ 174:

որոնք բացահայտ անցկացնում էին իրենց արարողությունները: Այդ աղանդները հանդես էին գալիս լայիցիզմի և երբեմն նաև Աթաթյուրքի քննադատությամբ, շարիաթի, խալիքայության վերականգնման կոչերով[60]: Կառավարությունը և հատկապես վարչապետ Մենդերեսը բավական ուշադիր էին որոշ հոգևորականների ու աղանդների ղեկավարների հանդեպ և նրանց ցուցաբերում էին ֆինասական ու այլ տեսակի աջակցություն: Իսլամական աղանդների և հոգևորականների մեջ իր կշռով ու ազդեցությամբ հատկապես առնձնանում էր Սայիդ Նուրսին, որը Նուրջուական աղանդի հիմնադիրն ու ղեկավարն էր: Սայիդը հայտարարեց, որ զբաղվելու է քաղաքականությամբ, ինչպես նաև արտահայտեց իր դրական վերաբերմունքը ԺԿ-ի նկատմամբ, իսկ վարչապետ Մենդերեսին անվանեց <<բարեպաշտ մուսուլման>>: ՈՒշագրավ է նաև Նուրջու աղանդը և Թիջանի աղանդը, որը ծայրահեղ թշնամական էր վերաբերվում կոնկրետ Աթաթյուրքին, հանդես գալիս նրա անձի խիստ քննադատությամբ: Աղանդավորները կազմակերպում և իրականացնում էին Աթաթյուրքի արձանների ու կիսանդրիների քանդումը, նկարների անարգումը: Այսպես, ԺԿ-ն իր քարոզարշավների ժամանակ և նախընտրական շրջանում լայնորեն օ/գտագործվում էր հոգևորականության ռեսուրսները. հոգևորականները բացահայտ աշխատում էին ԺԿ օգտին: Մուսուլման հոգևորականների, շեյխերի, թարիքաթների և աղանդների շրջանում մեծ հեղինակություն էր վայելում հատկապես վարչապետ Մենսդերեսը. 1959 թ, երբ Լոնդոն մեկնող թուրքական պատվիրակության ինքնաթիռը վթարի ենթարկվեց և ուղևորների մի մասը զոհվեց, իսկ Մենդերեսը փրկվեց և անգամ քերծվածք չստացավ, վարչապետի կուսակիցների և հոգևորականության մի մասը դա համարեց Աստծո նշան՝ նրան հռչակելով սուրբ և անգամ մարգարե[61]: Դրանից հետո կրոնամետ շրջանակները Մենդերեսին երբեմն դիմավորում էին իսլամական-խալիֆայական կանաչ դրոշակներով: ԺԿ-ն հստակ հետևում էր հոգևորականներին և կրոնին զգալի տեղ տալու իր որդեգրած քաղաքականությանը, որն էլ ավելի ակտիվացավ սոցիալական, քաղաքական և տնտեսական դժվարությունների աճին զուգահեռ՝ միաժամանակ որոշակի շրջանակների՝ զինվորաանության և լայիցիզմի կողմնակիցների անսքող դժգոհության պատճառ դառնալով: 1950-ականներին խորհրդային դիվանագիտական կառույցների Թուրքիայից ուղարկած տեղեկանքներում և զեկուցագրերում ուշադրու-

[60] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 175-176:
[61] Նույն տեղում, էջ 175-176:

թյան կենտրոնում է պահվում հայերի թվաքանակի ու մարդահամարների ժամանակ տվյալների խեղաթյուրման հարցերը: Թուրքական պաշտոնական վիճակագրությունը անտեսում է Թուրքիայի բնակչության ազգային կազմի հարցը, այն նեգափոխելով բնակչությանը ըստ լեզվական պատկանելիության բաշխելու վերաբերյալ տյալներով՝ մարդահամարների հարցաթերթիկներում չկա ազգային պատկանելիությունը կամ ազգություն հարցը դա փոխարինված է մայրենի լեզվի վերաբերյալ հարցով: Բնականաբար, դրա հետևանքը լինում է ազգային կազմի իրական պատկերի խեղաթյուրումը և պակասեցվում է ազգային փոքրամասնությունների թվաքանակը[62]: Բացի դրանից ազգային, անիրավահավասարության պայմաններում ազգային փոքրամասնությունների շատ ներկայացուցիչներ գրադասում են թաքցնել իրենց ազգությունը, իրենց մայրենի լեզուն: Թուրքիայի մարդահամարների տվյալները փաստում են, որ պակասեցվում են ազգային փոքրամասնությունների թվաքանակը: Օրինակ 1955 թվականին հայերենը իբրև մայրենի լեզու էր ընդունել 47 հազար մարդ: Միևնույն ժամանակ իրենց լուսավորչական էին հայտարարել ավելի քան 55 հազար մարդ, որոնք հայեր էին[63]: Այսպիսով, այս օրինակից երևում է, թե ինչպես է նվազեցվում հայ ազգային փոքրամասնության թվաքանակը, եթե այն որոշում են մայրենի (հայերեն) լեզվի հատկանիշով, նշենք որ 55 հազար հայ լուսավորչականներին հարկավոր է գումարել նաև այն հայերին, որոնք դավանում են ուրիշ կրոններ: Մայրենի լեզվի վերաբերյալ եղած թվական տվյալները կասկածանք են հարուցում նաև տարբեր մարդահամարների միջև եղած անհասկանալի թռիչքների պատճառով. ազգային փոքրամասնությունների թվաքանակը մերթ խիստ պակասեցվում է, մերթ խիստ մեծացվում (տես 1-ին աղյուսակը): Հազիվ թե այդ բանը կարելի լինի բացատրել, օրինակ, լեզվական ասիմիլյացիայով կամ նրանց բնական աճով: Նույնը չենք կարող ասել քրդերի հարցում, որովհետև վերջիներս վարում էին քոչվորական կյանք և կարող են պարզապես վրիպել մարդահամարներ անցկացնողների ուշադրությունից: Սակայն մարդահամարները տալիս են նաև նստակյաց ազգային փոքրամասնությունների՝ հայերի, հույների և այլոց թվաքանակի խիստ նվազում: Քրդական համայնքը ամենամեծ էթնիկ փոքրամասնությունն է Թուրքիայում, որի բնակչությունը գնահատվում է առնվազն 15 միլիոն: Նրանք հիմնականում ապրում են հարավ-արևելյան և արևելյան Թուրքիա-

[62]Երմեն Դ.Ե., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 282:
[63] Երմեն Դ.Ե., նշվ. աշխ., էջ 283:

յում, չնայած մեծ թվով մարդիկ գաղթել են Թուրքիայի արևմտյան քաղաքներ[64]: Բնակչության թվաքանակում թուրքերի բաժնի ավելացմանը նպաստում է նաև նրանց ներգաղթը ուրիշ երկրներից և ոչ թուրքական ծագում ունեցող անձաց արտագաղթը: Ազգային փոքրամասնությունների հունական, հայկական, հրեական դպրոցներ կան միայն Ստամբուլում , բայց դրանք էլ միայն տարրական ու միջնակարգ դպրոցներ են. քրդական, լազական, վրացական դպրոցներ բոլորովին չկան. ազգային լեզուններով՝ հունարեն, հայերեն, հրեերեն, ու ալբաներեն թերթեր նույնպես հրատարակվում են միայն Ստամբուլում, մյուս ազգային փոքրամասնությունների լեզուներով թերթեր ընդհանրապես չկան[65]: 1958 թ դեկտեմբերի 29-ին Ստամբուլում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության պատրրաստված տեղեկանքում, որը վերավերվում էր հայերին, հանդիպում է մի ուշագրավ տեղեկություն: Այսպես, խոսելով մարդահամարների ժամանակ հայերի և մյուս փոքրամասնությունների թվաքանակի միտումնավոր քիչ ներկայացնելու խնդրի մասին նշվում է, որ 1955թ անցկացված համապետական մարդահամարի տվյալներով Թուրքիայում հայերեն խոսողների թիվը 46934 է: Այնուհետև այդ թիվը բաժանվում է ըստ դավանանքային պատկանելության՝ առաքելական, կաթոլիկ, ավետարանական, և նշում, որ Թուրքիայում բնակվում է հայերեն խոսող, սակայն իսլամ դավանող 1130 մարդ: Սրանք, փաստորեն, այն մարդիկ են, ովքեր հարցման ժամանակ որպես մայրենի լեզու նշել են հայերենը, որպես կրոն՝ իսլամը: Բացի արխիվային փաստաթղթերից[66]՝ այլ աղբյուրներ ևս փաստում են, որ հատկապես 1950-ականներին Թուրքիայում գոյատևած քրիստոնեադավան հայերի հանդեպ կրկին սրվում է բռնի իսլամացման քաղաքականությունը և հատկապես գավառներում: Այսպես, 1950-ականների վերջին պետական տարբեր գերատեսչությունների կողմից Սասունում բնակվող փոքրաթիվ քրիստոնյա հայերին իսլամ ընդունելու կոչ-պահանջ է ներկայացվել, որը, սակայն, հակազդեցություն է առաջացրել սասունցիների մի մասի շրջանում, որոնք մերժել են պարտադրվամ կրոնափոխությունը: Սակայն ճնշումները շարունակվել են, ընդ որում՝ դրանցում ընդգրկվել են նաև ուժային կառույցները: Այս ամենի հերևանքով քրիստոնյա հայերի մի մասը, գոնե արտաքուստ, տեղի է

[64] Kaya Nurcan, Baldwin Clive, Minorities in Turkey, Stockholm, 2004, pp 7,- https://minorityrights.org/wp-content/uploads/2021/01/MRG-TurkeySub.pdf ( ebook).

[65] Երմեն Դ.Ե., նշվ. աշխ., էջ 284:

[66]Մելքոնյան Ռ , Աբրահամյան Մ. , Օսմանյան կայսրության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, 2015, էջ 191:

տվել և ընդունել իսլամ: Բռնի մեթոդներին զուգահեռ թուրքական պետությունը գործի է դրել նաև այլ միջոցներ, և հայկական գյուղեր հաճախ սկսել են այցելել մուսուլմանական հոգևորականներ, որոնք փորձել են համոզել տեղի բնակչությանը կամովին ընդունել իսլամ, որպեսզի հնարավոր լինի կատարել իրենց արարողությունները՝ հարսանիք, կնունք, թաղում և այլն, քանի որ այդ տարածքներում 1915-ից հետո հայ քրիստոնյա հոգևորականներ չկային, և արգելված էր նաև Ստամբուլից քահանաների գործուղումը պատմական Հայաստանի շրջաններ: Նույն քաղաքականությունը 1950-ականներին կիրառվել է նաև Դիարբեքիր նահանգում, և այդ մասին պատմում է ներկայումս Պոլսո Հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Ա-թեշյանը ու կոնկրետ օրինակներ բերում հենց իր ընտանիքի հետ կապված[67]: Այսպես, հարցազրույցներում Արամ Սրբազանը նշել է, որ իր քրոջ ընտանիքին ստպել են իսլամ ընդունել. «Այս դեպքերը տեղի են ունեցել 1950- ականներին» և հավելում, թե այդ տարիներին շատերն են բռնությամբ իսլամացվել[68]: Բացի այդ՝ շարունակվել են արդեն իսլամացված հայերի և նրանց սերունդների հանդեպ հալածանքները: Ինչպես փոխանցում են դիարբեքիրցի իսլամացված հայերի ժառանգները, 1950-ականների կեսերին տեղի քրդերը հալածել են իրենց ծնողներին, անգամ անարգել սպանել, և այդ ամենում տիրել է քրդերի ու այլ մուսուլմանների մոտ տարածված հետևյալ մտածելակերպը. «Դու հայ ես: Թեկուզ մուսուլման էլ լինես, միևնույն է քո ոսկորները հարամ են»: Բռնի իսլամացված հայերի խնդրի ուսումնասիրության ակտիվացմանը զուգահեռ, մեր մոտ արծարծվեց հետևյալ հարցը. Մեզանում շատ տարածված կարծիք կա, որ հայ կարելի է համարել միայն քրիստոնյա, և, համապատասխանաբար, «դարձի եկած հայ» հասկացությունն ինքնին բացառվում է, և, իհարկե, բերվում են բազմաթիվ փաստարկներ՝ այս տեսակետը հաստատելու համար: Նկատենք, որ սա բարդ խնդիր է, բայց դրան պետք է մոտենալ ոչ թե իդեալիստական կամ ցանկալի դիրքերից, այլ ելնելով ժամանակակից կոնկրետ իրականությունից: Հարկադրաբար իսլամացված հայերի և նրանց հենարանների առկայությունը փաստ է, և առնվազն անարդար կլինի անտեսել այն մարդկանց, ովքեր պահպանել են իրենց ծագման հիշողությունը ամենադժվար պայմաններում: Հիմնական փաստարկն է, որ հայը պետք է լինի բացառապես Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ, և ով որ չէ, նա հայ չէ կամ կարող է որոշ

[68] Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ. , նշվ. աշխ., էջ 192-193:

վերապահումներով հայ համարվել: Հարկ ենք համարում շեշտել, որ չնայած Հայ Առաքելական եկեղեցին կարևոր և առանձնահատուկ դեր խաղաց մեր ազգի պատմության մեջ, նրա ինքնությունն ու պատմությունը, այնուամենայնիվ, էթնիկ և կրոնական պատկանելությունը միմյանցից տարբերվում են, մենք հայ ենք եղել մինչև 301 թ[69]: Մենք պետք է ավելի զուսպ լինենք մեր գնահատականներում: Հայտնի գրող Ռաֆֆին սպառիչ տալիս է տարբեր հարցերի պատասխաններ: Օրինակ՝ կրոնականի մասին խոսելը և արտոնյալ միասնությունը, նա նշում է. «Մենք հավատում ենք, որ դավանանքների բազմազանությունը չեն հերքում ազգային միասնությունը. Անհրաժեշտ է միասնություն փնտրեք այս մասերի ներդաշնակության մեջ, որի հիմնական դրդապատճառը պետք է լինի ազգայնականություն բառի բարձրագույն իմաստով», «Կաթոլիկություն, բողոքականություն և նույնիսկ իսլամը հայությանը չեն զրկում հայկական ինքնությունից, ինչպես դա չի անում Առաքելական եկեղեցին մեզ իրավունք է տալիս կոչվել հայ »[70]: Այսպիսով, պատմաբան Կարեն Խանգլարյանը կարծում է. «... Յուրաքանչյուր ոք, ով իրեն հայ է համարում, գիտի իր հայկական ծագման կամ հայկական արմատների մասին, նա արդեն հայ է, անհերքելի հայ, անկախ այդ բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են՝ որտեղ նա ապրում է, ինչի վրա է լեզուն հաղորդակցվում, ինչ է նրա անունը կամ ինչ կրոն է նրան ստիպել»[71]: Պետք է ընդգծել, որ իսլամացված կամ ծպտյալ հայերը թուրքական հատուկ բռնապետական քաղաքականության արդյունք են: Մարդիկ ստիպված էին դավաճանել իրենց հավատքին, ազգությանը, լեզվին: Սրանք օսմանյան բռնապետության լուռ և շարունակական վկայություններ են: Միևնույն ժամանակ, այդ մարդիկ և նրանց հետնորդները Հայոց ցեղասպանության անվիճելի ապացույցն են: Տասնյակ հազարավոր հայ որբեր բռնությամբ իսլամացվեցին, և այսօր մենք գործ ունենք նրանց հետնորդների հետ: Կարևոր է նշել, որ իսլամի ընդունումը շատերի համար ժամանակավոր էր, և նպատակ էր դրված առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառնալ քրիստոնեությանը, պարզապես հանգամանքները ինչ-որ մեկին թույլ էին տալիս դա անել, իսկ մեկը՝ ոչ: Նորադարձների հետ մեր զրույցներում, երբ խոսեցինք այն մասին, որ նրանք դավաճանում են իրենց հավատքին, նրանք որպես հակափաստարկ ասում էին, որ հավատարիմ

[69] Мелконян Р. , Степень изученности темы исламизированных армян Турции: проблемы и перспективы, «21-й ВЕК», 2011, № 2, с 71.
[70] Мелконян. Р., նշվ. հոդվ., էջ 72.
[71] Мелконян Р., Проблема исламизированных армян в Турции , «21-й ВЕК», 2008, № 2 , с 90.

չեն մնում կրոնին, բայց մնում են ամուր կապված իրենց հողին[72]: Ուսումնասիրելով դարձի եկած հայերին՝ մեր առջև նպատակ դրեցինք վերականգնել մեր աղավաղված ինքնությունը, քանի որ նրանք մնացին մեր հայրենիքի այն հատվածում, որը մենք կորել ենք, հենց նրանք էին գաղտնի այցելում և շարունակում այցելել մեր պղծված սրբավայրերը: Նորադարձ հայերի շրջանում կա այդ փոխադարձ աղավաղման գիտակցություն: Վերոնշյալ փաստերը վկայում են, որ Թուրքիայի Հանրապետությունը հետևողականորեն շարունակել է Օսմանյան կայսրության որդեգրած բռնի իսլամացման քաղաքականությունը, որի շարժառիթը եղել է Թուրքիան հայկական տարրերից իսպառ <<մաքրելու>> և հայության անգամ փոքրիկ բեկորներին ձուլելու մոլուցք:

### 3.2 Ներքաղաքական իրավիճակը և քաղաքական ճգնաժամը1950- ական թթ:

Թուրքիայի տնտեսության մեջ արձանագրված որոշ բարելավումներն արդեն 1950-ականների կեսերին սկսեցին հետզհետե նահանջել. երկրում աճում էր դրամի արժեզրկումը, թանկացումներն ավելանում էին, վատթարանում էր սոցիալ-տնտեսական վիճակը: Սա, բնականաբար, ազդում էր հասարակության հատկապես սոցիալապես ավելի խոցելի խավերի վրա,որոնց մեջ էին մտնում բանվորները, գյուղացիները, պետական ծառայողները, մտավորականները և սպայական կազմը: Այս ամենն առաջացնում էր հասարակության լայն շերտերի բողոքը և նորովի բորբոքում հակահիշխանական տրամադրությունները: Բացի այդ, իշխանությունները սկսել էին ավելի հաճախ դիմել բռնի, հակաժողովրդավարական մեթոդներ, որոնք էլ դժգոհություններ էին առաջացնում հատկապես մտավորականության և երիտասարդության շրջանում[73]: Կարևոր է նկատել, որ քաղաքական հաղթանակները վարչապետ Ադնան Մենդերեսին չափազանց ինքնավստահ էին դարձրել, որի պատճառով նա արդեն չէր կարողանում համարժեք զգալ իրականությունը: Մենդերեսի ինքնավստահության դրսևորումներից էր այն, որ նա, մի շրջանակում խոսելով ընտրություններին իր կուսակցություն հաղթանակի մասին ասել էր. <<Եթե ցախ էլ ներկայացնեմ որպես թեկնածու, ապա նա վստահորեն կընտրվի պատգամավոր>>: Այսինքն՝ Թուրքիայում բազմակուսակցական համակարգի ներդրումը ստեղծել էր ոչ թե ժողովրդավարա-

[72] Мелконян Р., Степень изученности темы исламизированных армян Турции: проблемы и перспективы, «21-й ВЕК», 2011, № 2, с 74.
[73] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 177-178:

կան, այլ <<մեծամասնության բռնապետության>> համակարգ: 1995թ, արդեն ԺԿ ներսում ձևավորել էին դժգոհ խմբեր, ինչի հետևանքով կուսակցությունից նախ հեռացվեց 9 պատգամավոր, որոնց որոշ ժամանակ անց հետևեց արդեն ինքնակամ կուսակցությունը լքած ևս 10 պատգամավոր: Այս <<19-ի խումբը>> 1955 վերջին հիմնեց նոր՝ <<Ազատություն>> կուսակցությունը՝ ԺԿ կառավարության ներքին գործերի նախկին նախարար Լյութֆի Ֆևզի Քարաօսմանօղլուի նախագահությամբ: 1950-ական թթ. երկրորդ կեսին Թուրքիայում քաղաքական վիճակը, միջկուսակցական պայքարը բռնել էին շարունակական սրացման ուղի. իշխանությունները բացահայտ իրականացնում էին հակաժողովրդավարական քայլեր, որոնք հաճախ ունենում էին <<օրենքի>> ուժ[74]: 1957թ սեպտեմբերի 4-ին երեք ընդդիմադիր կուսակցությունները՝ ՀԺԿ-ն, <<Ազատություն>> կուսակցությունը և Հանրապետական ազգային կուսակցությունը հայտարարեցին ընդհանուր քաղաքական կուրսի որդեգրման մասին: Բացի այդ, ծրագրվում էր առաջիկա խորհրդարանական ընտրություններին հանդես գալ միասնական ընտրական դաշինքով: Սակայն ԹԱՄԺ-ը ընդամենը օրեր անց՝ սեպտեմբերի 11-ին, ԺԿ ներկայացմամբ ընդունեց նախընտրական դաշինքները և ընտրություններին միացյալ ցուցակով հանդես գալն արգելող օրենք: Սրանով իշխանությունները փորձում էին կանխել իրենց համար վտանգավոր զարգացումները: Չսամանափակվելով այս քայլերով՝ ԺԿ-ն դիմեց մեկ այլ քայլի ևս. չնայած հերթական խորհրդարանական ընտրությունները նախատեսված էին 1958-ին, սակայն ԺԿ-ն նախընտրեց մեկ տարի առաջ անցկացնել արտահերթ ընտրություններ՝ խուսափելու համար հեղինակության հետագա նվազումից: ԺԿ-ի և ՀԺԿ-ի միջև առկա միջկուսակցական լարվածությունը երբեմն դուրս էր գալիս քաղաքական պայքարի սահմաններից: 1957թ հոկտեմբերի 27-ին տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ. ԺԿ-ն հաղթեց՝ խորհրդարանում ձեռք բերելով մեծամասնություն՝ 424 պատգամավոր:[75] Սակայն այդ ընտրություններում ԺԿ-ն օգտագործեց վարչական ռեսուրսը, ոստիկանությունը, կեղծվեցին ընտրողների ցուցակները, բաժանվեց կաշառք, կիրառվեցին ճնշումներ, իսկ ընտրություններից հետո մերժվեցին ընդդիմադիր կուսակցությունների բողոքներն ու բողոքարկումները: Ընտրություններից հետո իրավիճակը մի քանի նահանգներում ու քաղաքներում այն աստիճան սրվեց, որ ոստիկանությունն ի զորու չէր կարգուկանոն

74 Գեղամյան Ս.Վ., նշվ. հոդվ., էջ 237-238:
[75] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 178-179:

հաստատել, և միայն բանակային զորամիավորումների միջամտությամբ հնարավոր եղավ իրավիճակը կարգավորել: Ավելորդ չէ փաստել, որ նոր խորհրդարանի բացման օրը մայրաքաղաք էին մտցվել տանկեր: Այս անգամ ևս Ջելալ Բայարը և Ադնան Մենդերեսն անփոփոխ մնացին համապատասխանաբար՝ երկրի նախագահի և վարչապետի պաշտոններում: 1957թ ընտրությունները ոչ միայն չնպաստեցին քաղաքական վիճակի կարգավորմանը, այլև ավելի լարեցին այն: <<Ազատություն>> կուսակցությունը մտավ ՀԺԿ կազմի մեջ, իսկ գյուղացիական կուսակցությունը միացավ Հանրապետական ազգային կուսակցությանը, որը վերանվանվեց Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցություն: Իշխող ԺԿ-ում ևս տեղի էին ունենում խմորումներ և դժգոհության աճ. դրա ամենախոսուն ապացույցներից էր այն, որ ԺԿ-ից հեռացել և ընդդիմությանն էր միացել այդ կուսակցության հիմնադիրներից մեկը՝ արտաքին գործերի նախկին նախարար Ֆուաթ Քյոփրուլյուն[76]: Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը նույնպես շարունակում էր անկում ապրել, որն ազդում էր նաև պետական պաշտոնյաների և զինվորականության աշխատավարձերի վրա[77]: ԺԿ-ն շարունակում էր ընդդիմության դեմ պայքարում կիրառել ժողովրդավարությունը ոտնահարող մեթոդներ, արգելվում էին հարահավաքները, խստացել էր գրաքննությունը: Այս և նմանատիպ այլ քայլերը համարվում են Մենդերեսի կառավարության կողմից իրականացված «կառավարական հեղաշրջում» կամ «քաղաքացիական հեղաշրջում»: Թուրքիայի զինվորականության շրջանում նույնպես տեղի էին ունենում խմորումներ: Ավանդաբար, զինվորականությունը համարվել է քեմալական սկզբունքների պաշտպան, և բնական է, որ քեմալական ՀԺԿ հեռացումը իշխանությունից պետք է որոշակի անհանգստություն պատճառեր բանակին: Պետք է նկատել, որ այդ ժամանակ բանակը միասնական չէր, գեներալների մի մասն աջակցում էր ԺԿ-ին, ինչը կարող էր հանգեցնել բոլորովին այլ հետևանքներ[78]: ԺԿ իշխանության գալուց անմիջապես հետո լարվածություն էր նկատվում իշխանությունների և բանակի որոշակի հատվածի միջև: 1950թ ԺԿ-ն բանակում իրականացրել էր «զտման» աշխատանքներ և հեռացրել իր համար անվստահելի տարրերին, իսկ առաջացած թափուր տեղերը համալրել, այսպես կոչված, «տեխնիկական սպաներով», որոնց կարիքն առաջացավ ամերիկյան

[76] Նույն տեղում, էջ 179:
[77] Գեղամյան Ս.Վ., նշվ. հոդվ., էջ 239:
[78] Նույն տեղում, էջ 179:

նոր ռազմատեխնիկայի շահագործման համար: 1950-ական թթ. կեսերին բանակում հակակառավարական տրամադրություններն ավելի բացահայտ բնույթ էին կրում, սկիզբ առած դժգոհությունները լայնորեն տարածվել էին նաև վերոնշյալ «տեխնիկական սպաների» շարքերում[79]: Զինվորականության շրջանում առկա դժգոհությունները պատճառ էին դառնում բանակում որոշ խմբավորումների կամ, այսպես կոչված, գաղտնի խմբերի ստեղծման համար: Գաղտնի խմբերի շարքում կարևորներից էր 1955-1956 թթ. Ռազմական ակադեմիայում ստեղծված խումբը, որը կոչվում էր «Աթաթյուրքի կողմնակիցների ասոցիացիա»: Արդեն 1957թ խմբի օրակարգում կար հեղաշրջման պատրաստվելու հարցը: Ավելի ուշ այդ անկախ գործող խմբերը տեղեկացնում են միմիանց մասին, և սկսվում է նաև ցանցային համագործակցություն: Նրանց ընդհանուր նպատակը հեղաշրջումն էր, սակայն տարբեր էին մոտեցումները ժամանակի ու անցկացման ձևի վերաբերյալ[80]: Գաղտնի խմբի անդամներին արգելվում էր քաղաքական գործիչների հետ համագործակցությունը, այդ դերը վերապահված էր միայն ղեկավարների: 1957թ. դեկտեմբերին բացահայտվեց սպաների մի խմբի հակակառավարական գործունեությունը և ձերբակալվեցին 9 սպաներ, իսկ գործն էլ համապատասխանաբար ստացավ «ինը սպաների գործ» անվանումը: Այսպիսով, ամրապնդելով իրենց դիրքերը բանակի տարբեր ստորաբաժանումներում և պահպանելով ցանցային կապ իրար հետ՝ զինվորականները սպասում էին հարմար առիթի ակտիվ գործողություններ սկսելու համար[81]: 1950-ականների վերջին Թուրքիայի ներքաղաքական կյանքում լարվածությունը հասել էր գագաթնակետին. դերերը փոխվել էին, և այժմ ՀԺԿ-ն էր դարձել ժողովրդավարության «ջատագով» ու քարոզիչ, իսկ ԺԿ-ն՝ դիկտատուրայի կրող և իրականացնող[82]: 1960թ. ապրիլի 13-ին ԹԱՄԺ-ում ՀԺԿ խմբակցությունը պահանջեց հետաքննություն սկսել ԺԿ առաջնորդների և կառավարության անդամների անօրինական գործունեության վերաբերյալ, որին ի պատասխան ԺԿ պատգամավորները հանդես եկան պահանջով՝ կախել ՀԺԿ նախագահ Իսմեթ Ինյոնյուին: Այդ շրջանում քաղաքական լարվածությունն արտացոլում էր նաև հասարակական կյանքում. ՀԺԿ և ԺԿ կողմնակիցների միջև սկսվել էր լարված ու անզիջում պայքար բոլոր ոլորտներում, որը հասցրել էր հասարակական պառակտման:

[79] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 180-181:
[80] Նույն տեղում, էջ 180-181:
[81] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 182-183:
[82] Նույն տեղում, էջ 182-183:

Նույնիսկ թաղամասերը, սրճարանները բաժանվում էին ըստ կուսակցության պատկանելիության. ԺԿ կողմնակիցների սրճարաններում կախված էր վարչապետ Մեդերեսի, իսկ ՀԺԿ կողմնակիցների սրճարանում՝ Իսմեթ Ինյոնյուի լուսանկարները: Անգամ մզկիթներում կուսակցություններն իրար կողքի չէին աղոթում, այտեղ նույնպես ձևավորվել էին «կուսակցական կողմեր»: Պատրաստվելով գալիք խորհրդարանական ընտրություններին՝ կուսակցությունները ակտիվացնում էին իրենց համախոների ընտրազանգվածները և աշխատանքներ տանում նրանց իրենց կողմը գրավելու համար[83]: ԺԿ-ն ակտիվ քայլեր էր անում առևտրարդյունաբերական, կրոնամետ, հոգևորականների շրջանակներում: Հետաքրքիր էր այդ առումով ՀԺԿ արած քայլերը, որը մեծ ուշադրություն էր դարձնում ուսանողական և պրոֆեսորադասախոսական շրջանակների հետ իր շփումներին[84]: Արդեն 1960թ. սկզբին Թուրքիայում հաստատվել էր քաղաքական խոր ճգնաժամ, ստեղծվել էր պայթյունավտանգ դրություն: Այդ լարվածության խորացմանը նպաստեց այն, որ 1960թ. ապրիլի 18-ին ԺԿ առաջարկով ստեղծվեց արտակարգ լիազորոթյուններ ունեցող խորհրդարանական հանձնաժողով, որը զբաղվելու էր ընդդիմության գործունեության ուսումնասիրությամբ[85]: Հանձնաժողովը, կիրառելով իր լիազորությունները, երեք ամսով արգելեց ընդդիմադիր ուժերին և կուսակցություններին ժողովներ, հանրահավաքներ, համագումարներ անցկացնել, մամուլում տպագրել քաղաքական բնույթի հայտարարություններ և այլն: ՀԺԿ նախագահ Իսմեթ Ինյոնյուին անգամ արգելվեց մուտք գործել Ազգային ժողովի շենք: Դժգոհությունն իշխանությունների կոշտ սահմանափակումներից հետզհետե ավելի հրապարակային բնույթ ստացավ, որն արտահայտվեց բողոքի հանրահավաքների տեսքով, որոնց մասնակցում էին հասարակության տարբեր խավեր: Այսպես, 1960 թ ապրիլի 19-ին Անկարայում տեղի ուեցավ բազմամարդ հանրահավաք ընդդեմ իշխանությունների գործողությունների: Ի նշան համերաշխության հանրահավաք կազմակերպեցին արդեն Անկարայի համալսարանի ուսանողները հենց համալսարանի շենքի առջև: Այստեղ ևս ոստիկանությունը բիրտ մեթոդներով ցրեց ցույցը՝ կրակ բաց անելով ուսանողների վրա,ինչի հետևանքով մի քանիսը վիրավորվեցին: Ուսանողական հանրահավաքը տեղափոզվեց Քըզըլայ հրապարակ, ինչպես նաև

[83] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 184-185:
[84] Նույն տեղում, էջ 184-185:
[85] Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 184-185:

բողոքի հանրահավաքներ էին տեղի ունենում Իզմիրում, Բուրսայում[86]: Այսպիսով, այս ամենի հետևանքով իշխանությունները Անկարայում և Ստամբուլում մտցրեցին արտակարգ դրություն, սկսվեցին ձերբակալություններ հատկապես ուսանողության շրջանում, արգելվեցին բոլոր տեսակի ժողովները, ցույցերը և այլն: Սակայն այս բոլոր մեթոդները արդյունավետ չէին,և հուզումները շարունակվում էին:

[86] Նույն տեղում, էջ 184-185:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒսումնասիրելով «Թուրքիայի քաղաքականությունն ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ 1950-1960 թվականներին» գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

- Թուրքական պետության քաղաքականությունը հայերի բռնի իսլամացման ուղղությամբ և վերաբերմունքը կրոնափոխ հայության նկատմամբ՝ տեսնում ենք, որ դրանում կա հստակ շարունակական դրսևորում՝ և՛ Օսմանյան կայսրությունում, և՛ Թուրքիայի Հանրապետությունում շարունակվել է նույն քաղաքական գիծը:
- Հաշվի առնելով այն հագամանքը, որ ԺԿ իշխանության տարիներին բնիկ ժողովուրդը նոր էր հնարավորություն ստանում ունենալ փոքր հողակտորներ, կարող ենք հետևություն անել, որ Թուրքիայի փոքրամասնությունները կարող էին ուղղակի մոռանալ այդ հողակտորների մասին:
- Հետևելով Ջելալ Բայարի քաղաքականությանը և հայ թուրքագետների, ինչպես նաև թուրքագետ Էրիկ Ցյուրխերի տեսակետը, ով նույնպես Թուրքիայում երիտթուրքական կառավարման շրջանը հասցնում է մինչև 1950-ը, գալիս ենք այն եզրահանգման, որ մինչ այդ իշխած քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցությունը երիտթուրքերի դե ֆակտո շարունակողն էր ու քեմալական ազգայնամոլական շարժման, գրեթե առանց բացառության, բոլոր առանցքային գործիչները նախկին երիտթուրքեր էին:
- Հետևելով Մենդերեսի կառավարման տարիներին վարած քաղաքականությունը, և 1924թ սահմանադրությունը, որը փոփոխվեց 1960թ-ին, որը նոր հնարավորություն էր տալիս կրոնի, կրթության վերաբերյալ, ինչը շատ կարևոր նշանակություն ուներ ազգային-կրոնական փոքրամասնությունների համար, սա գալիս է ևս մեկ անգամ ապացուցելու, որ ազգային-կրոնական փոքրամասնությունները 1950-1960 թթ. զրկված են եղել իրեց համար առաջնային կարևորություն ներկայացնող իրավունքներից:
- Թուրքիայում փոքրամասնությունները դիտարկվում էին որպես անհավատներ, ովքեր ենթարկվում էին հալածանքների ու սպանվում էին, սա ապացուցում է

Թուրքական կառավարության անհանդուրժող վերաբերմունքը վերջիններիս նկատմամբ:

- Ազգագային փոքրամասնությունները՝ հայեր, հույներ ստիպողաբար հրաժարվում էին իրենց մայրենի լեզվից, և մարդահամարներում չկան նրանց ազգությունները, որոնք կփաստեին ճիշտ թվաքանակ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ:
- Թուրքահայերի լեզվի ու կրոնի վերաբերյալ եղած տվյալների հարաբերակցությունից կարելի է անել նաև այն հետևությունը, որ ասիմիլյացման պրոցեսում կրոնը պահպանվում է ավելի երկար, քան լեզուն, և որ հենց կրոնական պատկանելությունն է մնում իբրև վերջին խոչընդոտը թուրքերի հետ հայերի լրիվ միաձուլման և իրենց ազգային ինքնագիտակցությունը կորցնելու ճանապարհին:
- Թուրքիայի Հանրապետությունը հետևողականորեն շարունակել է Օսմանյան կայսրության որդեգրած բռնի իսլամացման ցեղասպան քաղաքականությունը, որի շարժառիթը եղել է Թուրքիան հայկական տարրերից իսպառ <<մաքրելու>> և հայության անգամ փոքրիկ բեկորներին ձուլելու մոլուցքը:
- Ուսումնասիրելով դարձի եկած հայերին մեր նպատակն էր վերականգնել մեր աղավաղված ինքնությունը, քանի որ նրանք մնացին մեր հայրենիքի այն հատվածում, որը մենք կորել ենք, հենց նրանք էին գաղտնի այցելում և շարունակում են այցելել մեր պղծված սրբավայրերը: Նորադարձ հայերի շրջանում կա այդ փոխադարձ աղավաղման գիտակցություն:
- Որոշակի շրջանակներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ընկալում են որպես կողմնակի անձինք և թշնամիներ:

Այսպիսով, կարելի է ասել, որ այսօր Թուրքիայի հայ փոքրամասնությունը լուրջ խնդիրների առջև է կանգնած. Հայկական մշակութային ժառանգության մի մասը ոչնչացվել է, իսկ մյուսը ծայրահեղ հիասթափեցնող վիճակում է:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## ԳՐՔԵՐ


1. Երեմեն Դ.Ե. , Թուրքերի ծագումը, Հայաստան Հրատ., Եր., 1975, 370 էջ:
2. Հասրաթյան Մ, Օրեշկովա Ս, Պետրոսյան Յու.., Թուրքիայի պատմության ուրվագծեր, ԵՊՀ Հրատ., Եր., 1986 , 389 էջ:
3. Հովհաննիսյան Հ, Յավրումյան Մ, Քոչարյան Հ , Կրոնական գործոնը հայ-թուրքական հարաբերություններում՝ նոր աղապտացիոն մեխանիզմների մշակման գործում, ԵՊՀ Հրատ., Եր., 2014, 84 էջ, https://cccsysu.com/wp-content/uploads/2015/05/Arm-Turk-adaptacia.pdf (ebook):
4. Աբրահամյան Միհերի, Մելքոնյան Ռուբենի, Օսմանյան կասրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայրի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, ՎՄՊ-Պրինտ Հրատ., Երևան, 2015, 298 էջ:
5. Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի Հանրապետության պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան., 2014, 396 էջ :
6. Еремеев Д., Турция в годы Второй мировой и “холодной” войн (1939-1990), Издательство Аспект Пресс, Москва, 2005, с. 267.
7. Dilek Güven, « Riots against the Non-Muslims of Turkey: 6/7 September 1955 in the context of demographic engineering », *European Journal of Turkish Studies*, 2011, c. 87 https://journals.openedition.org/ejts/4538 (առցանց հասանելի է 13.01.2021).
8. Kaya Nurcan, Baldwin Clive, Minorities in Turkey, Minority Rights Group International, July 2004, pp. 50,- https://minorityrights.org/wp-content/uploads/2021/01/MRG-TurkeySub.pdf (առցանց հասանելի է 16.03.2021 ).


## ՀՈԴՎԱԾՆԵՐ


1. Գեղամյան Ս. Թուրքիայի ազգային բուրժազիան երկրի տնտեսական և սոցիալ-քաղաքական կյանքում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1985, Հ 12, 229-238 էջ:
2. Կոնդակչյան Ռ., Միջկուսակցական պայքարը Թուրքիայում 1950-1960 թթ, Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ, Երևան, 1970, Հ. 5, 88-132 էջ:
3. Մարտիրոսյան Հ.Մ., Թուրքական կառավարող շրջանների քաղաքականությունը օտարերկրյա կապիտալի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ, Երևան, 1970, Հ. 5, 141-166 էջ:
4. Մելքոնյան Ռ., երիտթուրքեր-քեմալականներ գաղափարական և կադրային շարունակություն, Արևելագիտության հարցեր , Երևան, 2018, թիվ 14, 152-165 էջ, - http://ysu.am/files/6-1574142210-.pdf (ebook):
5. Մելքոնյան Ռ., Թուրքիայի քաղաքականությունը քրիստոնյա փոքրամասնությունների (հայեր, հույներ) նկատմամբ 1920-1960-ական թթ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2019, թիվ 12, 120-136 էջ:

6. Մելքոնյան Ռ., Հայ պատգամավորները Թուրքիայի Հանրապետության խորհրդարանում (1935-1960 թթ), Արևելագիտության հարցեր, Երևան, 2012, թիվ 7, 180-186 էջ:
7. Մելքոնյան Ռ., Մկրտիչ Շելեֆյան. վերջին հայ պատգամավորը, Թուրքական խորհրդարանում, «21-րդ ԴԱՐ» ամսագիր, 2018, թիվ 6, 18-24 էջ,-http://www.noravank.-am/upload/pdf/01.Ruben%20Melqonyan_21_dar_05_2011.pdf (առցանց հասանելի է 13.03.2021):
8. Агаджанян М., Дискриминационные элементы национальной политики Турции, «21-й ВЕК», Октябрь, 2006, № 1, с. 104-131,-file:///C:/Users/LIke%20comp/Desktop/Downloads/diskriminatsionnye-elementy-natsionalnoy-politiki-turtsii.pdf (ebook).
9. Мелконян Р., О некоторых проблемах армянского нацменьшниства в Турции., «21-й ВЕК», Март, 2010, № 4, с. 84-90,- file:///C:/Users/LIke%20comp/Desktop/Downloads/o-nekotoryh-problemah-armyanskogo-natsmenshinstva-v-turtsii.pdf (ebook).
10. Мелконян Р., Проблема исламизированных армян в Турции , «21-й ВЕК», № 2 Февраль 2008, № 2, с. 23-29,-file:///C:/Users/LIke%20comp/Desktop/Downloads/problema-islamizirovannyh-armyan-v-turtsii.pdf ( ebook).
11. Мелконян Р., Степень изученности темы исламизированных армян Турции: проблемы и перспективы.., «21-й ВЕК», Декабрь 2011, № 2, с. 69-77,- file:///C:/Users/Like%20comp/Desktop/Downloads/stepen-izuchennosti-temy-islamizirovannyh-armyan-turtsii-problemy-i-perspektivy.pdf ( ebook).
12. Karimova Nigar, Deverell Edward, <<Minorities in Turkey>>, Occasional Papers No. 19, Stockholm, 2011, pp 5-22,__ http://miris.eurac.edu/mugs2/do/blob.pdf?type=pdf&_serial=1101210931437 ( ebook).

## ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

1. Սաբահ օրաթերթ, Թուրքիայում ազգային փոքրամասնությունների սահմանադրական պահանջները, Ստամբուլ, 2005, https://akunq.net/am/?p=17033&fbclid =IwAR3 ( առցանց հասանելի է 24.02.2021):
2. Ахметов Тимур, Государство и нацменьшинства в Турции: в поисках общего языка в вопросе образования, Москва, 2017, с. 5-10,https://www.idelreal.org/a/ethnic-minorities-in-turkey-and-their-political-rights/28817690.html(առցանց հասանելի է 12.01. 2021).
3. Ахметов Тимур, Турция в 1950-е гг.: внутренняя и внешняя политика правительства А.Мендереса. Переворот 1961 г. и принятие новой конституции. Москва, 2017,- https://studopedia.net/ (առցանց հասանելի է 22.02.2021).